



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Խմբագրական
Մանուկները եւ հաւատացեալ ծնողքը

Գ. Գ. Խ.

Հոգ. Կեանք
Սուրբ Հոգիով մկրտութիւնը
Հոգաբարութիւն
Աստուծոյ տանող ճամբան
«Բարի զինուորին», «Սպասում».

Վեր. Ա. Զ. Եղսեան
Թարգ. Վեր. Զ. Եղիազարեան
Սամուէլ Պ.

Կենաց ամուսններէն
'Իէմ' առ դէմ
Երիտասարդ... Հոգեվարք... Յուսաշատ...
Նաշատակներ

Ս. Գրական ուսումնասիրութիւն
Աստուածաշունչը

Զ. Բ. Պետաքեան

Իմանկանց սիւնակ
Հասկաքաղ

Զանազան լուրեր

ԲԱՆԲԵՐ հոգևոր ամսածերներ և էն. ֆրանսահայ Աւետարանա-
կան եկեղեցիներու պաշտօնականներն է, այսու ամենայնիւ,
նպատակ ունի ծառայելու ամենուն, որոնք Յշմարտութիւնը
կը փնտռեն եւ ծարաւը կըզգան Աստուծոյ խօսքին անխորդախ
վկայութեան: Քանի որ Քրիստոս չեկաւ միայն կարգ մը
անհատներու համար, այլ ամենուն, ուստի Յշմարիտ «Բանին»
ներկայացուցիչն ալ ջնանջնար ո' եւ է յարանուանութիւն մը,
հապա մէկ է անոնց հետ, որոնք Քրիստոսի մէջ իրեն կը
միանան: ԲԱՆԲԵՐ կ'ուզէ ծառայել անոնց:

ԲԱՆԲԵՐ հոգևոր ամսածերներ երկու լեզուներով կը հրատարակուի Հայերէն եւ Թուրքերէն: Երկուքն ալ
կը տպուին Մարտէլի մէջ: Հայերէնը ունի 16 էջ (կողքէն դուրս), որուն խմբագրական մարմինն է,
Վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆ. ԲՐՕՓ. Գ. Գ. ԽԱՅԻԿԵԱՆ Եւ Պատ. ՍԱՄՈՒԷԼ ՊԱԳԳԱԼԵԱՆ

Թուրքերէնը ունի 8 էջ ո՛չ մէկ հայերէնին Թարգմանութիւնը ալ տարբեր բովանդակութեամբ: Այս պարագան
դիւրութիւն կուտայ որ Թուրքերէն գիտցող մը անկէ ալ կրնայ օգտուիլ: Թուրքերէն մասի պատասխա-
նատու խմբագիրն է՝

ԺՅԶԵՅ Է. ՊԱՐՍՈՒՄԵԱՆ

18, Rue du Docteur Rebatel — LYON (France)

որու ղրկուելու են նաեւ բոլոր Թուրքերէն յօդուածները:

ԲԱՆԲԵՐԻ համար յօդուած կրնան գրել անոնք միայն, որոնք
գիտեն վերստին ծնունդն ու հոգևոր կեանքը եւ անոր մէջ
ապրելու ամենօրեայ արախտութիւնը կը վայելեն Քրիստոսով:

XXXXXXXXXXXX

ԲԱՆԲԵՐԻ բաժանորդագրութիւնը տարեկան է կանխիկ

— ԲԱԺՆԵԳԻՆՆ Է —

ՀԱՅԵՐԷՆԸ Ֆրանսա եւ Սուրիա 13 Ֆրանք
Արտասահման 20 Ֆրանք կամ 30 Սէնթ

ԹՈՒՐԿԵՐԷՆԸ Ֆրանսա եւ Սուրիա 7 Ֆրանք
Արտասահման 10 Ֆրանք կամ 10 Սէնթ

ՀԱՅԵՐԷՆ Եւ ԹՈՒՐԿԵՐԷՆ միասին Ֆրանսա եւ
Սուրիա 20 Ֆրանք եւ Արտասահման 27 Ֆրանք
կամ 1 Տօլար եւ 10 Սէնթ

Թղթակցութիւններ եւ յօդուածներ ղրկուելու են
ԲՐՕՓ. Գ. Գ. ԽԱՅԻԿԵԱՆԻ, իսկ զրամական առա-
քումներ Վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆԻ անունով, եր-
կուքն ալ հետեւեալ հասցէով.—

Réd. «PANPÈRE» c/o Rev. H. N. GHAZAROSSIAN

7, Rue Papère

MARSEILLE (France)

Արմենի'ր դուն
որ կը քնանաս, եւ
կանգնէ մեռելնե-
րէն, ու Քրիստոս
քեզի լոյս պիտի
տայ:
Եփես. Ե. 14

Քանզի ալ աս-
կէ քիչ մը ատենէն
Ան որ գալու է՝
պիտի գայ ու պի-
տի բուշանայ:

Երբ. Ժ. 37

Ուրեմն ա'լ վախճանք, որ չբլլայ մէ
Անոր հանգիստը մոռնելու խոստմունքէն որ մեզի մ'նացեր է,
ձեզմէ մէկը զրկուած գտնուի: Երբ. Գ. 1

Թ. ՏԱՐԻ

ՕԳՈՍՏՈՍ 1933

ԹԻԻ 8

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՄԱՆՈՒԿՆԵՐԸ ԵՒ ՀԱՒԱՏԱՑԵԱԼ ԾՆՈՂՔԸ

Թող առէ՛ք այդ մանր տղոցը եւ մի՛ որդի-
լէք ատոնք Ինծի գալէն, վասնզի երկինքի թագաւո-
րութիւնը այդպիսիներուն է:

Ամէն մէկ սրտցաւ հաւատացեալի համար
մեծ վիշտ է՝ նկատել որ մեր հայ երիտասարդու-
թեան մեծամասնութիւնը օրէ օր կը հեռանայ
Աստուծմէ եւ կը նետուի անհաւատութեան գիր-
կը: Որո՞ւ սիրտը չմորմոքիր, չխշխշար, երբ կը
տեսնէ որ մեր օրիորդներն ու մանկամարդ կի-
ները սինեման ու պարասրահը եկեղեցիէն գե-
րադաս կը համարեն, եւ երիտասարդները զրա-
մին ու զոեհիկ հաճոյքներու կ'երկրպագեն ու
Աստուծոյ սուրբ անուան կը հայհոյեն աներկիւ-
ղօրէն:

Այս անաստուածութեան և անոր հետեանքն
եղող բարոյական ու ֆիզիքական քայքայման՝
կարեւոր պատճառներէն մին է քրիստոնէական
դաստիարակութեան պակասը: Մեր ներկայ սե-
րունդը իր ուսման յարմարագոյն շրջանը ան-
ցուց տարագրութեան մէջ, երբ անիկա ստիպ-
ուած էր իր կեանքի օրերը փճացնել՝ մութալով,
գիւղէ գիւղ թափառելով ու մահմետական բըռ-
նակալ տէրերու քմահաճոյքին ծառայելով, եւ
երբ ան երբեք պատեհութիւն չունեցաւ լսելու,
սորվելու Աստուծոյ խօսքը ու սնանելու անով՝
իբր անխարդախ կաթով: Չկրցաւ ստանալ աստ-
ուածային գիտութիւնը, ուստի մոլորեցաւ, երբ
ենթարկուեցաւ տարագրութեան եւ գաղթակա-
նութեան անոնի փորձանքներուն ու տառա-
պանքներուն, եւ մէկդի նետեց հաւատք, եկե-
ղեցի եւ ամէն սրբութիւն: Անոնց այս քայլին
հետեւանքը անխուսափելի էր: Կորսնցնելով ի-
րենց Աստուածը՝ անոնք կորսնցուցին նաեւ իրենց
ամենէն զօրաւոր պաշտպանը ստորին քնազդնե-

րու եւ անասնական կիրքերու փոթորիկին դէմ:
Այժմ անդեկ նաւակի մը նման կը բշռին հոս
ու հոն՝ մինչեւ որ մարմինով ու հոգիով փշր-
ուին ամբողջովին:

Այժմ մեր մանուկներն ալ նոյն վտանգին
տակ են, անոնք ալ կը մեծնան առանց կրօնա-
կան առողջ դաստիարակութեան. ֆրանսական
ու ամերիկեան վարժարանները, ուր կը յաճա-
խեն մեր գաղթական հայ մանուկներէն շատեր,
բնաւ կրօնի դաս չեն աւանդեր, Սուրբ Գրոց
պատմութիւն եւ համար չեն սորվեցներ: Սուր-
իոյ եւ Պալքանեան երկիրներու մէջ հաստատ-
ուած մեր հայկական վարժարաններէն շատեր
իրենց ծրագրին մէջ թէեւ ունին կրօնի դաս, սա-
կայն այն կ'աւանդուի յաճախ այնպիսի ուսու-
ցիչներէ, որոնք բոլորովին անտարբեր են, շա-
տեր նոյնիսկ հաւատք չունին: Ուստի իրենց ա-
ւանդած Սբ. Գրոց դասը աշակերտները Աստու-
ծոյ գրաւելու տեղ անոնց ունեցած մանկական
հաւատքն ալ կը մեռնէ: Ուստի կը համարձա-
կինք ըսել, այդ պայմաններու տակ դպրոցին
մէջ կրօնի դաս աւանդուելէն աւելի օգտակար է
չաւանդուիլը:

Եթէ այսպէս շարունակուի, մենք ապագա-
յին պիտի ունենանք երիտասարդութիւն մը, որ
շատ աւելի հակաքրիստոնէական եւ բարոյապէս
անկեալ կեանք պիտի վարէ քան ներկայինը:

Սակայն ատոր առջեւը գէթ մասամբ կ'առ-
նուի, եթէ նախ՝ հայ հաւատացեալ ծնողքները,
մանաւանդ մայրերը ունենան մեր ժամանակին
պահանջած աչալրջութիւնը, իմաստութիւնը, ե-
ռանդն ու քրիստոնէական նախանձախնդրու-
թիւնը եւ իրենց սրտահատորները իրենց կա-
թին հետ սնուցանեն նաեւ Յիսուսի սիրովը:

Մենք գիտենք թէ առաջին դարերուն ալ քրիստոնեայ ընտանիքներուն զաւակները կը մեծնային ու կը կրթուէին հեթանոս միջավայրի ու զպրոցի մէջ: Անոնք կերպով մը կը գտնուէին աւելի աննպաստ պայմաններու տակ քան մենք: Սակայն այն ատենուան հաւատացեալ ծնողքները՝ կրցան իրենց սիրովը եւ սուրբ ու աստուածավախ կեանքովը իրենց զաւակներուն վերայ այնպիսի տպաւորութիւն ձգել, զոր չկրցան ընջել հեթանոս ընկերներ եւ ուսուցիչներ: Ընդհակառակն քրիստոնեայ աշակերտները իւրացուցին, մարտեցին հեթանոս դպրոցներու գիտութիւնները եւ զանոնք զործածեցին Աստուծոյ փառքին համար: Կը բաւէ միայն մի քանի անուններ յիշել՝ հաստատելու համար այս իրողութիւնը:

Ահա Օգոստինոսը: Հեթանոս միջավայրի մէջ եւ հեթանոս ուսուցիչներու ոտքը մեծցաւ. իր ուսածը հեթանոս փիլիսոփայութիւնն էր: Թէեւ այս ամէնը ատեն մը մոլորցուցին, նոյնիսկ անբարոյութեան տիգմերուն մէջ թաղեցին երիտասարդ Օգոստինոսը, բայց վերջապէս յաղթանակը տարաւ իր մայրը, Մոնիքա, որ անխոնջ աղօթքներովը եւ աստուածատուր, անձնուէր ու զորովալից սիրովը փշրեց իր որդւոյն յամառութիւնը, զայն Քրիստոսի խաչին ստքը խոնարհեցուց եւ Անոր հաւատարիմ ծառաներէն մին դարձուց. առաքեալներէն ետքը անիկա եղած է եկեղեցւոյ վրայ ամենէն խոր ազդեցութիւն ձեռնարկողներէն մին: Նոյնիսկ հեթանոս փիլիսոփայութիւնը անոր ձեռքին մէջ ծառայեց իբր զէնք՝ աւելի լաւ կոռուելու հեթանոսութեան դէմ: Նոյնը պատահած է նաեւ Բարսեղի, Գրիգոր Նազիւզացիի եւ ուրիշ բազմաթիւ անուանի եկեղեցական հայրերու կեանքին մէջ: Հակառակ իրենց ուսուցիչներու ջանքերուն, հեթանոս դպրոցներու կամ ուրիշ միջավայրերու մէջ անոնք չմոլորեցան իրենց հաւատքէն, քանզի իրենց քրիստոնեայ ծնողաց եւ ազգականներու սուրբ ու առաքինի կեանքը ու կենդանի հաւատքը աւելի բարձր կը խօսէին, քան թէ ուսուցիչներու պերճախօս ու տրամաբանական դասախօսութիւնները:

Այսպէս կը պատահի յաճախ նաեւ այսօր: Արդիական աստուածաբաններու եւ գիտնականներու ամենէն կուռ նկատուած փաստերն իսկ շատ անգամ չեն յաջողիր քանզի հաւատքը երիտասարդ ուսանողին, որուն աչքերուն առջեւ մայրը ապրած է ճշմարիտ ու կենդանի քրիստոնէութիւնը:

Կրնայ ըլլալ որ այդպիսի երիտասարդներ

ատենուայ մը համար երեքան ու մոլորին, բայց շատ պարագաներու տակ դարձեալ կը կանգնին յիշելով իրենց հօր կամ մօր հաւատքով տալիս յաղթանակները:

Կ'արժէ հոս յիշել հետեւեալը.— Երիտասարդ մը ուսանողութեան շրջանին շատ բան լսած ու կարդացած էր Սուրբ Գրոց ճշմարտութիւններու դէմ եւ սայթաքած հաւատքէն. սակայն շուտով վերականգնեցաւ ըսելով, «Եթէ այս ամէնը ճշմարտութիւն են, մայրս յիմար մըն է, բայց ինչպէ՞ս կրնամ յիմար նկատել անձ մը, որ ամէն բան իմաստութեամբ կ'ընէ, գիտէ թէ Որու կը հաւատայ, իր հաւատքովը յաղթական կեանքը կը վարէ եւ մարմնացումն է քրիստոնէական սիրոյ եւ առաքինութեան»:

Ուստի սիրելի հայ հաւատացեալ ծնողքներ, մեծ պատասխանատուութիւն կը ծանրանայ ձեր վրայ. այս հակակրօն դարուն՝ զլիսաւորաբար դուք էք որ ձեր զաւակները պիտի առաջնորդէք Յիսուսի: Դուք պիտի կրնաք զայս ընել մասնաւորաբար ձեր կեանքի օրինակովը: Ընտանեկան ու առանձնական սրտաբուլիս աղօթքներովը, Յիսուսի ամենակարողութեան ու սիրոյն վերայ ձեր ունեցած անյողդողդ վստահութեամբը, ձեր զԱյն անձնուիրաբար սիրելովը, Անոր հրաշքանդելովը, վերջապէս՝ քրիստոնէութիւնը ձեր անհատական, ընտանեկան ու ընկերային կեանքին մէջ ապրելովը: Ձեր հոգեհատորները Քրիստոսի վրայ արմատացնելու համար՝ այս է կարեւոր միջոցը: Բայց լաւ պիտի ընէք, եթէ ուշադրութիւն ընէք նաեւ հետեւեալ կէտերուն. որոնք ձեր կեանքի օրինակին հետ միասին ընթանալով՝ պիտի կրնան մեծ ծառայութիւն մատուցանել:

1. Ժամանակ տուէք ծանօթացնելու համար ձեր զաւակներուն Սուրբ Գիրքը: Շաբթուան մէջ երկու կամ քսն մէկ անգամ առէք զանոնք ձեր առջեւ, ձեր ծունկերուն վրայ, ձեր գիրկը եւ պատմեցէք անոնց Աստուածաշունչի պարզ, հրապուրիչ ու հոգեպարար պատմութիւնները, զոց սորվեցուցէք անոնց Աստուծոյ վսեմ խօսքերէն զանոնք, որոնք կը համապատասխանեն անոնց տարիքին ու փորձառութեան: Եւ այս ամէնը ըրէք ձեր լեզուն Քրիստոսի սիրովը քաղցրացնելով, ու անշուշտ ազդեցութիւն պիտի ձեռնարկէ անոնց վրայ, եթէ պատմելու մեծ ընդունակութիւն ալ չունենաք: Եթէ պատմելու մասնաւոր կարողութիւն ունիք, ձեր իններուն հետ առէք նաեւ այն ծանօթ մանուկները, որոնց ծնողքը հետաքրքրութիւն եւ յարմարութիւն չու-

ներն իրենց զաւակներուն քրիստոնէական դաս-
տիարակութեամբը զբաղելու: Մի զանգատիք
ըսելով, «Ժամանակ չունինք, շատ զբաղած ենք»: Շաբաթը քանի՞ ժամ կը յատկացնէք աշակիսի
գործերու համար, որոնք նուազ կարեւոր են քան
ձեր զաւակներուն հոգեւոր դաստիարակութիւնը:
Եթէ չաղակրատելու, ուրիշները քննադատելու
եւ բամբասկու համար զոհուած ժամերուն մի-
այն կէսը, քառորդը նուիրէք այս մեր ցուցու-
ցած նպատակին, կը բաւէ: Յիշեցէք թէ ձեր
զաւակները Տէրոջմէ տրուած են ձեզի եւ ձեր
պարտքն է զանոնք մեծցնել Անոր համար: Այդ
մասին ոեւէ զանցառութիւն կը վշտացնէ այն
հրեշտակները, որոնք Աստուծմէ պահապան
կարգուած են մանուկներու (Մատ. ԺԲ. 10), կը
վշտացնէ մանաւանդ զԱյն, Որ ըսած է, «Ով որ
այսպիսի տղայ մը կ'ընդունի Իմ անունովս, զիս
կ'ընդունի» (Մատ. ԺԲ. 5), Որ սիրած է զանոնք
ու Իր կեանքը դրած անոնց համար:

2. Զանացէք ամենէն աւելի Յիսուսը ճանչցը-
նել ու սիրցնել ձեր զաւակներուն: Պատմեցէք
այն պատմութիւնները, որոնք զԱյն կը յայտ-
նաբերեն իբր մանուկ, իբր բարեկամ մանր տը-
ղոց, իբր ամենակարող ու գլխած օգնական
ու պաշտպան հիւանդներու, տկարներու ու ին-
կածներու, եւ մանաւանդ իբր քաւիչ մեղաց,
տուիչ յաւիտենական կեանքի եւ միջնորդ Հօր
Աստուծոյ ու մարդոց միջեւ: Իմաստուն կերպե-
րով առաջնորդեցէք՝ Սբ. Գրքերն մէջ ուրախու-
թեամբ ու հետաքրքրութեամբ կարդալու ձեր
արդէն պատմածերը. յաճախ բաւական է ա-
տոր համար միայն մէկ խօսք, «Գնա՛, կարգա՛
այդ պատմութիւնը, որ վերջը ինծի կամ փոքր
քոյրիկիդ եւն, պատմես, անշուշտ պիտի կըր-
նաս լաւ սորվիլ եւ գեղեցիկ պատմել»: Արդէն
պզտիկները շատ հետաքրքիր են իրենց լսած-
ները անձամբ ալ կարդալու, ուստի մեր կող-
մէն միայն թելադրութիւն մը, խրախոյս մը, բա-
ւական է:

3. Զանացէք առաջնորդել ձեր զաւակները
Յիսուսը սիրելու ոչ թէ Անկէ նիւթական, հապա
հոգեկան պարգեւներ ստանալու գիտումով: Մեր
ներկայ երիտասարդութիւնը առհասարակ իր
անհաւատութիւնը կ'արդարացնէ ըսելով, «Եթէ
Աստուած սէր է, ինչո՞ւ տարագրութեան ատեն
շատ աստուածավախներ սպաննուեցան կամ սո-
վահար եղան. ինչո՞ւ հապարաւոր անմեղ մա-
նուկներ անգթօրէն խողխողուեցան: Եթէ արդար
ու ամենակարող է, ինչո՞ւ չպատժեց արիւնահեղ
ոճրագործները», եւն: Որպէսզի մեր մանուկնե-

րը ապագային այդպիսի անարկու ներքին տագ-
նապներու ատեն՝ հաւատքի մէջ նաւաբեկութիւն
չկրեն, աստիճանաբար սորվեցնելու է անոնց թէ
Քրիստոս աշխարհ եկած է մարդիկը մեղաց պա-
տիժէն ու գերութենէն փրկելու, Աստուծոյ հետ
որդիական հաղորդակցութեան մէջ դնելու եւ ա-
նոնց Իր Հարչարանքովը, մահովն ու յարութիւ-
նովը ցուցնելու թէ «Աստուած այնպէս սիրեց աշ-
խարհը, մինչեւ Իր Միածին Որդին տուաւ, որ-
պէսզի ամէն ով որ Անոր հաւատայ՝ չկորսուի,
հապա յաւիտենական կեանք ունենայ»: Սոր-
վեցնելու է թէ քրիստոնեային երբեք խոստաց-
ուած չէ նիւթական բարոք կեանք անցնել:
Ընդհակառակն որոշապէս ըսուած է, «Աշխարհի
մէջ նեղութիւն պիտի ունենաք» (Յովհ. ԺԶ.
33): «Ժողովարաններուն մէջ ձեզ պիտի ծեծեն...
Իմ անուանս համար ամենուն ատելի պիտի ըլ-
լաք» (Մատթ. Ժ. 17, 22): Սորվեցնելու է թէ
այս Յիսուսը կրնայ հիւանդները բժշկել, անօ-
թիները կերակրել, մեզ մարմնաւոր տառապան-
քէ ու մահէ փրկել, անիրաւները ու Հարելը ան-
միջապէս պատժել: Անիկա այս ամէնը ըրած է
ատենօք ու կ'ընէ հիմա ալ երբ Ինքը յարմար
դատէ: Բայց Ան յաճախ կը թողու որ մարմնա-
ւոր ու նիւթական նեղութիւններ ունենանք՝ ա-
նոնց միջոցաւ մեզ աւելի զօրացնելու, եւ յա-
ւիտենական կեանքի համար աւելի լաւ պատ-
րաստութիւն դիտումով: Սակայն Ինքը կարող է
այնքան զօրացնել մեզ ներքնապէս, որ մենք
կրնանք ուրախանալ, զիմք փառաւորել երբ Իր
անուանը համար անարգութիւնք (Գործ. Ե. 40-42),
բանտարկուինք, ծեծուինք ու վիրաւորուինք,
(Գործ. ԺԶ. 16-23, 33) եւ նոյն իսկ մեռնինք
(Յովհ. ԻԱ. 18, 19):

Այս մասին զեռ ըսելիք ունինք, բայց կը
պահենք ուրիշ պատեհութեան մը, երբ պիտի
խօսինք Կիրակնօրեայ դպրոցներու նկատմամբ:
Գ. Գ. Խ.



ՀՈԳ. ԿԵԱՆՔ

ՍՈՒՐԲ ՀՈԳԻՈՎ ՄԿՐՏՈՒԹԻՒՆԸ

Մինչեւ այսօր շատ անգամ հարցումներ եղած կամ զրկուած են ինծի այս նիւթին վրայով:— Ի՞նչ է այս, կամ ո՞րն է շիտակ իմաստը Սուրբ Գիրքին համեմատ:

Գիտնալով թէ տարբեր, եւ մինչ իսկ իրարու հակառակ, հասկացողութիւններ կան հաւատացեալներու մէջ այս մասին, ու նաեւ վիճաբանութիւններ, երբեմն դառն, եւ հետեւաբար բաժանումներ, օգտակար սեպեցի այսպէս հըրապարակաւ պատասխանել: Քանի մը ամիս առաջ Բանբերի կողմէն ըսուեցաւ որ անոր մէջ գրեմ, բայց ատեն մը վարանեցայ, խորհելով թէ մի գուցէ անհանգիստ ընեմ ինծի սիրելի և յարգելի եղող ուրիշ հաւատացեալներ որոնք տարբեր կերպով կը հասկնան «Սուրբ Հոգիով մկրտութիւնը»: Սակայն վերջապէս վստահելով թէ անոնք համբերութիւնով պիտի լսեն ինծի, եւ հեղութիւնով ալ պիտի յօժարին ընդունիլ հոս յայտնուած ճշմարտութիւնը, երբ տեսնեմ թէ արգարեւ համեմատ է Աստուծոյ Խօսքին՝ համարձակեցայ ձեռք զարնել այս յօդուածիս զըրութեան:

1. Երբ կ'ըսենք «Սուրբ Հոգիով մկրտութիւն», աղէկ գիտնանք որ ՄԿՐՏՈՒՆԸ ՏԵՐ ՅԻՍՈՒՍ ԲՐԻՍԱՌՈՒՄ Է, եւ ո՛չ Սուրբ Հոգին: Հայր Աստուած նշան տուաւ Յովհաննէս Կարապետին ըսելով, «Որու վրայ տեսնես Հոգին որ կ'իջնէ ու կը հանգչի, ԱՆԻԿԱ է որ Սուրբ Հոգիով կը մկրտէ» Յովհ. 1. 33: Եւ Յովհաննէս վկայեց թէ, «ԱՆԻԿԱ պիտի մկրտէ» Մատթ. 3. 11: Շատ մը անկեղծ հաւատացեալներ զայս չգիտնալով զուր տեղը կ'աղօթեն եւ կ'սպասեն որ Սուրբ Հոգին մկրտէ գիրենք: Ասանկ աղօթք մը, եթէ երբեք պէտք է (որ պէտք չէ), մատուցուելու է Տէր Յիսուսին, որ Ինքն է Մկրտողը:

2. «Մկրտիչ» թարգմանուած բառը (վաղդիւզո) իր արմատովը կը նշանակէ թափախել կամ թափախել, թափաղել կամ թաղել ջուրին մէջ: Այս իմաստին համազօր ուրիշ Հայերէն բառ մը— մխրձել, հնչական փոփոխութիւնով մը կ'ըլլայ մկրտել: Ուրեմն, «մկրտել» կը նշանակէ թափախել կամ թաղել ջուրի մէջ:

3. Եւ երբ կը կարդանք թէ Տէր Յիսուս Քրիստոս կը մկրտէ Սուրբ Հոգիով, առ չնշանակեր թէ Ան կը մկրտէ Սուրբ Հոգիին միջոցով, հապա թէ Ան կը մխրձէ, կը մկրտէ, կը թաղէ

հաւատացեալը Սուրբ Հոգիին Մէջ: Այս գործողութեան համար Սուրբ Հոգին գործիք մը կամ միջոց մը չէ, հապա ոլորդ մը, պարունակ կամ միջավայր մը, ՈՐՈՒՆ ՄԷՋ Ան կը թաղէ եւ կը տեղաւորէ Իր ամէն փրկածները, ինչպէս մենք մարդ մը կը թաղենք ջուրին մէջ, եւ ինչպէս թոչունը կը թռչի օդին մէջ:

4. Վերեւ ըսուածները նկատի առնելով, բոլորովին համեմատ կը գտնենք Աստուծոյ Խօսքին եւ բոլորովին ապահով, երբ «Սուրբ Հոգիով մկրտութիւնը» խօսքը թարգմանենք ու կարդանք, «Մկրտութիւն Սուրբ Հոգիին Մէջ»: Ու թէպէտ յօդուածիս բոլոր ընթացքին (մեր այսպէս վարժուած ըլլալուն համար) ես պիտի գրեմ «Սուրբ Հոգիով», բայց ամէն ալ հասկնանք թէ այս ճշմարտապէս կը նշանակէ «Սուրբ Հոգիին Մէջ»: (Անգղիարէնը, ոչ թէ «With», հապա, «in the Holy Spirit», Նոր թարգ.):

5. Արդ, որչափ ճշմարիտ եւ պարզ է հասկընալ թէ որովհետեւ առանց բացառութեան ասէն մէկ հաւատացեալ, իբր մէկ անդամը Քրիստոսի Մէկ եկեղեցիին, Անոր Մէկ Մարմինին, ԱՐԴԷՆ ԴՐՈՒԱԾ Է այս Մէկ Մարմինին Մէջ, ուրեմն ԱՄԷՆ Մէկ հաւատացեալ ԱՐԴԷՆ ՄԿՐՏՈՒՄ Է Սուրբ Հոգիով, Ա. Կորնթ. 12. 12-14, 20, 27, Հռ. 12. 5, Եփես. 5. 30: Եւ որովհետեւ գրուած է թէ «ԱՄԷՆ ՍԱՒ ՄԷԿ ՀՈԳԻՆ ԽՄԵՑԻՆՔ» Ա. Կորնթ. 12. 13 (կամ զրաբարով, «ԱՄԷՆ ՍԱՒ ՄԷԿ ՀՈԳԻՆ ԽՄԵՑԻՆՔ»), կամ Անգղ. նոր թարգ. «Were WE ALL MADE TO DRINK of one Spirit» եւ կամ թուրքերէնով «ՃԻԻՄԼԷՄԻՋ տախի ՊԻՐ Բուհտան ԻՉԻՐԻԼՏԻՔ» (ոչ թէ իշտիք), ինքնաբերապէս եւ իրաւունքով կը հետեցնենք թէ ինչպէս որ ԱՄԷՆ ՄԷԿ հաւատացեալ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՄԷՋ ՄԿՐՏՈՒՄ Է, անանկ ալ Սուրբ Հոգին ԱՄԷՆ ՄԷԿՈՒՆ ՄԷՋ ԿԸ ԲՆԱԿԻ: «Իմ մէջ» կեցէք ու Ես ձեր մէջը:

«Գրուածէն աւելի բան չմտածելով, անկարելի է ասել տարբեր բան հասկնալ եւ հաւատարկարգա՛ հետեւեալ համարները եւ նկատէ որ ամէն ալ անցեալ կատարիալ են, եւ ապառնի ու հրամայական ձեւ չկայ— Հռոմ. 5. 5, 8. 9, 14, 15, Ա. Կորնթ. 2. 12, 3. 16, 6. 19: Բ. Կոր. 1. 22, 5. 5, Գաղ. 3. 2, 5, 4. 6, Եփես. 1. 13. 4. 30, Ա. Թիմ. 4. 8, Բ. Տիմ. 1. 14, Ա. Յովհ. 3. 24, եւ 4. 13: Այս վկայութիւնները գրուածին պէս եւ միամտօրէն իւրացնող մէկը ուրիշ բան չկրնար ընել, միայն թէ գոհանալ Հայր Աստուծոյն որ զինքը մկրտած է Ս. Հոգիին մէջ, և զԱյն բընաւեցուցեր է իրեն մէջ: Փառք Անոր Անուան:

Պէտք է նորէն ըսեմ, թէ այս յօդուածը կը գրեմ միայն որովհետեւ մեծ ցաւ կ'զգամ տեսնելով որ մեր Հօրմէն մեզի, Իր զաւակներուն, տրուած այս մեծ Շնորհքը, որով Ան ՄԻԱՅՈՒՅՆՐ է մեզ ամէնս Քրիստոսի Մէկ Մարմինին մէջ, այս նոյն Շնորհքը — «Սուրբ Հոգիով մկրտութիւնը» — Անոր Խօսքով չհաստատուած մեկնութիւններու պատճառով, առիթ տուած է վիճաբանութեան, սնապարծութեան, արհամարհանքի ու վերջապէս բաժանմունքի: Ո՛րչափ ցաւալի: Եւ ո՛րչափ տրտմած ըլլալու է Սուրբ Հոգին: Յիշատի շատ կ'ամէնամ աս վիճակներուն համար: Ինչպէ՛ս չենք հասկցած եւ չենք ընդունած թէ Տէր Յիսուս Քրիստոս Սուրբ Հոգիին մէջ գնելով ԲՈՂՈՐ փրկուածները, զանոնք իրարու կը կապէ, եւ երբեք չբաժանելու: Այսպէս Ան կը շինէ եկեղեցին, Իր Մարմինը, մինչեւ լրանայ ան:

Անգամ մ'ալ լսենք Պօղոս Առաքեալին. — «Մարմինն ԲՈՂՈՐ անդամները... մենք ԱՄԷՆՍ ՄԷԿ Հոգիով ՄԷԿ մարմին ըլլալու ՄԿՐՏՈՒԵՑԱՆԲ»: Ահա Հոգեշունչ մեկնութիւնը Սուրբ Հոգիով մկրտութեան: Ինչո՞ւ հասկնանք ուրիշ կերպ, ինչո՞ւ վիճինք եւ ինչո՞ւ բաժնուինք մեր երկնաւոր Հօր այս պատուական Շնորհքին վերայ՝ որ մեզ ՄԷԿ ընելու համար արդէն տրուած է, եւ Մէկութիւնը կատարուած է:

Մեծ անձկութիւն ունիմ եւ սաստիկ փափաք որ սիրելի հաւատացեալներ — ամէնն ալ — տեսնեն թէ մեզի աւանդուած այս «ողջամիտ վարդապետութիւնը» ցաւալիօրէն կը ծառայեցնենք բաժանմունքներու, մեր տգիտութեան եւ հսականութեան պատճառով: Վասնզի ոեւէ զգաստ քրիստոնեայ կը վկայէ թէ ո՛ւր որ երեւան կ'ելլէ սխալ մեկնաբանութեամբ աւանդուած այս վարդապետութիւնը, — «Սուրբ Հոգիով մկրտութիւնը» — հոն իրարմէ կ'ուծանան միեւնոյն Հօր զաւակները եւ կը մերժեն զիրար: Այսպէս անոնք հակառակ կ'երթան Տէրոջ պատուէրին թէ «Այնպէս քալէք ինչպէս կը վայելէ այն կոչումին որով կանչուեցաք... ջանալով ՀՈԳԻՒՆ ՄԻԱՅՈՒՅՆՐԻԹԻԻՆԸ (ՄԷԿՈՒԹԻԹԻԻՆԸ) ԽԱՂԱՂՈՒԹԻԵԱՆ ԿԱՊՈՎԸ ՊԱՋԵԼ»: Եփս. 4. 1, 3:

Ուրիշ զժբաղդութիւն մը: Մինչ այս վարդապետութիւնը անխտրաբար Աստուծոյ բոլոր զաւակները Քրիստոսի Մարմինին մէջ ապահովցընելու, հաստատելու եւ զանոնք ուրախ եւ զօրաւոր ընելու համար է, ընդհակառակը՝ շատ մը անկեղծ հաւատացեալներ, սխալ ուսուցման պատճառով, զուր տեղը կը մատնուին հոգեւոր կաս-

կածներու, ներքին տառապանքներու եւ պարապ ջանքերու, որպէսզի ձեռք բերեն այն բանը որ արդէն իրենց համար ըլլալով եղած լմնցած է, եւ իրենց շնորհուած՝ յաւիտեան, իրենց մէջ բընակող եւ դուրսէն մթնոլորտի պէս զիրենք շրջապատող Սուրբ Հոգիին ներկայութեամբ, միայն թէ գիտնան եւ հաւատան: Ինչ որ արդէն ստուգիւ ունին, եւ պէտք է իւրացնեն եւ վայելեն հաւատքով, կը ջանան ձեռք բերել վայրապար խոնարհեցումներով, զուր տեղ լալազին ազօթքներով եւ անպէտ աղաղակներով: Ա. Կորն. 12. 13ի համեմատ ԱՐԴԷՆ Սուրբ Հոգիով ՄԿՐՏՈՒԱՄ շատ մը միամիտ հաւատացեալներ իրենց փրկուած ըլլալուն անգամ կասկածելով յուսահատութեան կը մատնուին: Այս ալ ցաւալի չէ՞ Ընթերցող, երանի՛ աղէկ տեսնես այս կողմը:

Ու միւս կողմէն, այն հաւատացեալներն ալ որ «երկրորդ շնորհք մը» ընդունած են (ինչպէս իրենք կ'ըսեն), «նոր փորձառութիւն մը», ասոնք ալ անտեղիօրէն կը պարծնան իրենց եղբայրներուն եւ քոյրերուն վրայ որոնք չունին իրենց «փորձառութիւնը», չգիտնալով թէ կը պարծենանք քանով մը որ արդէն ունէին այդ «փորձառութիւնէն» առաջ, եւ որ հաւասարապէս ամէն փրկուածի արտօնութիւնը եւ ստացուածքն է: Այո, կը պարծենան շնորհքով մը՝ որմէ մէկն աւելի չունի ուրիշէն, ոչ ալ ասիկա պակաս ունի մէկալէն, «վասնզի» կ'ըսէ Առաքեալը, ՄԵՆԲ ԱՄԷՆՍ ՄԷԿ ՀՈԳԻՈՎ .. ՄԿՐՏՈՒԵՑԱՆԲ:

Արդ, ինչպէս որ փուճ բան է պարծենալ հաւատակից մէկուն վրայ Սուրբ Հոգիին կարծեցեալ մկրտութիւնովը, անանկ ալ անիրաւութիւն է այդպէս նեղութիւն պատճառել անոր, պնդելով թէ ան ալ նոյնպէս մկրտուելու է Անով:

Այս նիւթը Աստուծոյ Խօսքին մէջ քննելու ատեն շատ զգուշութեամբ հոգ տանինք որ մեր մտքին մէջ ունենանք Պօղոս Առաքելոյն օրինակը եւ պատուէրը, թէ «զուր մեզմէ սորվիք ԳԸՐԻԱԽԷՆ ԱԻԵԼԻ ԲԱՆ ՄԸ ԶԽՈՐՀԻԼ, որ չըլլայ թէ ձեզմէ մէկը հպարտանայ մէկուն համար ուրիշի մը դէմ» Ա. Կոր. 4. 6: Միշտ ապահով է այս կանոնին համեմատ ուսանիլ Աստուծոյ Խօսքը:

Ու եթէ Առաքեալներն իրենք այսպէս կ'ընէին, իրենց ձեռքը եղած Սուրբ Գիրքին (չին Կրտակարանին) մէջ «գրուածէն աւելի բան չխորհելով», հապա ի՞նչպէս կրնանք մենք վարուիլ

որտին մէջ որոշապէս աւելի նախամեծար տեղ չեն գրաւեր: Քննենք տակաւին: Երբ Աստուած մեզի պարգեւ մը կուտայ՝ մեզի այնպէս չի՞ թըւիր թէ ան մեր սեփական ստացուածքն է. թէ ան երբեք մեզմէ պիտի չառնուի. եւ թէ կերպով մը՝ զայն մեզի պահելը մեզմէ կանուամ ունի. այս ալ տեսակով մը ստացուած մէկ բանին համար պարծենալ է: Ասիկա մոռնալ է թէ «Ան որ տուաւ, կրնայ ետ առնել, թէ Ան որ հարստացուց, կրնայ աղքատացնել»:

Աստուծոյ մեզի փոխ տուածին համար «Իմն է», կ'ըսենք: Մէկ խօսքով մեր ներքին խոնարհութիւնը հետեւեալ կանոնով պէտք է ուղղենք: — Մեր ստացած պարգեւներուն վրայ միայն եւ միայն Աստուծոյ փառք մատուցանելու նպատակաւ մտածել. նաեւ ինքզինքնիս խոնարհեցնելու համար, ըսելով թէ զանոնք որքան քիչ օգտագործած ենք. նաեւ մտածելու համար թէ ինչպէ՞ս կրնայինք զանոնք աւելի լաւ արժեցնել: Այս պարգեւներուն վրայ ուրիշ ոեւէ կերպ մը տածել՝ ամբարիշտ եւ հպարտօրէն մտածել է:

(2) Քննելէ յետոյ թէ մեր ստացածներուն համար կը պարծենանք, հիմա տեսնենք թէ անոնց համար ուրիշներուն մօտ ի՞նչ դիրք կը բռնենք: Կեանքի հետեւեալ կանոններուն կը հետեւինք: Ըսել չեմ ուզեր թէ մենք այդ կանոնները կը հաւնինք, հապա թէ անոնք են որոնք մեզ կ'ուղղեն գործնական կեանքի մէջ: Ուրիշէ մը ստացած մէկ բանին համար չպարծենալ՝ հետեւեալն է. — «Իր տաղանդները ցուցադրելու ետեւէ չըլլալ. զանոնք միայն շինութեան համար երեւան հանել. հակառակութեան և սքանապարծ հոգիով ոչ մէկ բան չընել. մարդոցմէ տեսնուելու համար եւ մեր ըսածին ու ըրածին վրայ զմայլեցնելու համար չգործել եւ չխօսիլ. ինքզինքը բացէ ի բաց բան մը արժեցնելու ետեւէ չըլլալ»:

Իսկ նուրբ միջոցներով՝ աւելի ո՛չ. այսինքն ինչպէս կ'ըսէ իմաստունը, «այնպէս ձեւացնելով թէ հոն չենք դաշիր»:

Մէկ խօսքով չպարծենալ ըսել է, «Աստուծոյ մեզի կամ մեր միջոցով ըրած մէկ բարիքը ուրիշ պատճառի համար այլոց չգիտցնել հապա միայն զանոնք Աստուծոյ փառք մատուցանելու մղելու համար, կամ զանոնք քաջալերելու փափաքով. եւ ո՛հ, մեր այս փափաքին մէջ շատ անկեղծ ըլլալու ենք: Ստացած մէկ բանին համար չը պարծենալ ըսել է «Ինքզինքը ամենէն առաջ չնետել, եւ խօսակցութիւնը ինքն իր վրայ դարձնելու չփորձուիլ, եղբայրներու մէջ առաջին ըլլալու փափաքն ու սէրը չունենալ. մեզ

գովող, մեզմէ ուրիշը չտեսնող եւ միայն մեր շուրջը համախմբուող կողմնակիցներ ունենալու չփափաքիլ: Եթէ մեր արժէքին վրայ բարձր գաղափար ունինք, եւ երբ ոմանք մեզ այդչափ չեն գնահատեր, անոնց դէմ դատողի վարմունք չենք ունենար: Ստացած մէկ բանին համար չպարծենալ կը նշանակէ, «Ինքզինքին վրայ լաւ գաղափար ունենալով՝ դառն, չոր, խոցող եւ դատող լեզու ու ոճ չգործածել, ճշմարտութիւնը սիրելու եւ պաշտպանելու պատրուակով ուրիշ քրիստոնեաներու հանդէպ խիստ դատաստաններով չյորդիլ. դժուարութիւններ յարուցանող, վիճաբանող եւ իր անձնական մտքին գերի չըլլալ. ինքն իր գաղափարները յամառօրէն չպաշտպանել (սա պատճառով միայն որ անգամ մը զանոնք յառաջ նետած ենք): Ստացած մէկ բանին համար չպարծենալ կը նշանակէ, «Չըլլալ անոնցմէ որոնք կը կարծեն թէ այլեւս ուրիշ ոչինչ ստանալու պէտքը ունին. որոնք չեն կրնար տանիլ զիրենք քննադատողներն ու իրենցմէ տարբեր խորհողները. որոնք դժուարաւ կը համոզուին թէ իրենք կը սխալին. եւ զրեթէ թշնամիի աչքով կը նային անոնց վրայ՝ որոնք իրենց ամէն տեսակէտներուն «այո», չեն ըսեր, եւ ամէն բանի մէջ զիրենք չեն գնահատեր»:

(Շար.)

ԱՍՏՈՒԾՈՅ ՏԱՆՈՂ ՃԱՄԲԱՆ

8. ՇՆՈՐՀԱՅ ՎԻՃԱԿ

Երբոր մարդ մը կենդանի եւ փրկարար հաւատքին հասած է, արդարութիւն գտած եւ ընդունելի է Աստուծոյ քով, եւ եթէ որոշակի գիտէ թէ փրկուած մըն է, այն ատեն կը գտնուի շնորհքին ներքեւ: Ներքնապէս նոր մարդ մը եղած, ինչպէս որ գրուած է, «Թէ որ մէկը Բրիտանիայի մէջ է, անիկա նոր ստեղծուած մըն է, հիները անցան եւ ահա ամէն բան նոր եղաւ»: Բընական մարդը կ'ապրի մեղքի աշխարհին մէջ, ո՛չ թէ շնորհքի: Աղջիկ մը ըսաւ ինծի որ տակաւին փրկութեան հասած չէր, ոչ ոքէ կը դիտուի: Ասիկա բնական մարդուն վիճակն է, որու մէջ կայ փարիսեցիական հպարտութիւն եւ փառք որ ինքզինքը կը ցուցադրէ: Այսպէս ամէն օր մարդիկ կ'ապրին մեղքի մէջ, ըլլալ կոշտ կամ նուրբ տեսակէն. օր. ինքնահաճութեան, ինքնացուցադրութեան, ունայնամտութեան եւ ամբարտաւանութեան մէջ եւայլն: Ուրիշներ կ'ապրին

բողոքովին ժամանակին եւ այս աշխարհիս ոգի-
ին համաձայն Աստուծոյ հակառակ ընթացքով
մը, ոմանք իրենց աշխարհային կոչման հտե-
ւէն: Որեւէ մէկը չկրնար աշխարհային կոչման
մէջ հաւատարիմ ըլլալ քան քրիստոնեայ մը:
Անկեղծ քրիստոնեայ մը կը կառավարէ աշխար-
հայինը, իսկ ընդհակառակն, շահամոլներ թող
կուտան որ իրենք անոնցմէ կառավարուին: Շա-
տեր Ալպա դուքսին նման կ'ըսեն: Երբ օր մը ի-
րեն հարցուցին թէ տե՛սած է արեւու խաւարու-
մը, կը պատասխանէ, «Այնչափ շատ ընկիւք ու-
նիմ երկրի վրայ որ ժամանակ չեմ գտներ դէպի
երկինք նայելու»: Քրիստոնեան անկից շատ բար-
ձրը կը մնայ, որուն վրայ չեն կրնար իշխել ոչ
հասարկութիւն, ոչ մեղքի ցանկութիւն եւ ոչ ալ
աշխարհաիրութիւն ու երկրային բաներ: Անիկա
ատանկ բաներու իշխանութեան տակ չէ, հապա
շնորհքի ներքեւ է այլեւս: Մեծ փոփոխութիւնը
որ մարդու մէջ տեղի կ'ունենայ, արդարութեան
հասնիլն է որ ընդունելի է Աստուծոյ: Պօղոս ա-
ռաքեալ կը գրէ Հռոմ. Ե. 1-5, «Ուստի մենք
հաւատքով արդարացած ըլլալով խաղաղութիւն
ունինք Աստուծոյ հետ մեր Տէրոջը Յիսուս Բը-
րիստոսի ձեռքով, որուն ձեռքով ընդունեցինք
հաւատքով այս շնորհքիս մօտենալն ալ, որուն
մէջ կեցեր ենք եւ Աստուծոյ փառաց յուսովը կը
պարծենանք: Ոչ միայն այսքան, հապա նաեւ
նեղութիւններու մէջ կը պարծինք, ինչու որ զի-
տենք թէ նեղութիւնը համբերութիւն կը գործէ,
համբերութիւնը փորձառութիւն, փորձառութիւնը
յոյս եւ յոյսը ամօթով չձգելը, ինչու որ Աստուծոյ
սէրը մեր սրտերուն մէջ տարածուած է Հոգւոյն
Սրբոյ ձեռքով որ մեզի տրուեցաւ»: Եթէ այդպէս
մէկ մը Աստուծոյ առջեւ արդարացած է եւ ճշ-
մարիտ հաւատք ունի, եւ իր փրկութեան վը-
տահ, կը գտնուի շնորհքի մէջ եւ ունի Աւետա-
րանի երեք հիմնական առաքելութիւնները, այ-
սինքն Կալատք առ Քրիստոս, յոյս առ Աստուած
եւ սէր առ իւր ընկեր: Հաւատք, յոյս, սէր, քը-
րիստոնէութեան երեք հիմնական յատկանիշ-
ներն են: Քրիստոնեայ ըլլալ կը նշանակէ տար-
բեր կեանք ապրիլ, շնորհքի մէջ ապրիլ ըսել
է օրէ օր հեռանալ աշխարհէն եւ միանալ Քրիս-
տոսի հետ եւ վերն ալ Աստուծոյ հետ:

Թարգ. (Վեր.) ՅԱԿՈԲ ԵՂԻՍԱՅԱՐԵԱՆ

Դավալա

«ԲԱՐԻ ԶԻՆՈՒՈՐԻՆ»

Բ. Տիմ. Բ. 3, 4

Սրտիս Հափ տաք համբոյր մ'ունիմ մտեր-
մախոհ ճակատիդ
Ուր սիրոյդ բոլր հրկիզն արդէն փոթորկա-
հար կ'արծարծի...
Ձերմ համբոյր մ'ալ զըթութեան պէս զոհա-
բերուող հոգիիդ,
Եւ ժիր ձեռքիդ՝ որ միշտ այլոց պէտքին հա-
մար կը հիւծի':
Ըլլայ դռակից կամ եօթնօտար, թշնամիի,
ընկերի՝
Միշտ կը զոհես, միշտ կը զոհուիս ամէն
մարդու անխտիր.
Մանուկ մ'իւնչպէս բուռն հոգիով իր մօր կուրծ-
քին կը փարի՝
Նոյն պրկումով վեհ Իտէալիդ կառչած ես պինդ
անհարիր:
Օ՛հ, կ'զմայլիմ... զի երկնասոյց կեանքի ան-
շեղ վերելքէն
կը մաքստիս դէպի Յիսուս որ Իտէալդ է
գերազոյն:
Ի՞նչ փոյթ քեզի, շանթ, փոթորիկ, թող թէ
թոխքդ անարգին.
Դուն կը սըլաս, կը վերանաս խըրոխտ արծ-
ուի մը հանգոյն:

«ՍՊԱՍՈՒՄ»

Ղուկ. ԺԲ. 35, 36

Կ'ուզեմ գոցել դիւրագրաւ մտքիս զոները բոլոր,
թող ոչ մէկ գորշ յելուգակ թռչուններու երամակ
Գայ խռովիլ իմ ներքին անդորրանքս փառաւոր.
Ձի կը բաղձամ ծնրաղբիւր եւ մէկուսի գոռնփակ
Երկար, երկա՛ր սպասել Անոր որ ինձ պիտի գայ...
Կ'ուզեմ գոցել նիգերով սրտիս զոներն ամրապինդ
Գուցէ իմ էն մտերիմ Սիրահարս այսօր գայ:
Թող աշխարհիկ ոչ մէկ լոյս, ոչ մէկ ժպիտ,
ոչ մէկ խիւղ,
Ոչ մէկ դիւթանք ամսեղունկ զաղատագորի ներս
սողայ,
Ես չեմ ուզեր բորբոքել անոր նախանձն ահաւոր:
Գո՛ցէ հոգիս, աշխարհի պատուհաններդ երկաթ,
Ոչ մէկ անձի վաւաշտ աչքերը թող ներս նային.
Ձի գուն ցիտես երկնատենչ էութիւնս անընդհատ
Կարօտի զոյգ թեւերով իր թագաւոր փեսային՝
Ջահը վառած կ'սպասէ, ու կ'սպասէ՛, կ'սպասէ...
Լա Սիօթա ՍԱՄՈՒԷԼ Պ.

ԿԵՆԱՑ ԱՄՈՒՆԵՐԷՆ

ԴԵՄ ԱՌ ԴԵՄ

Երբ Գանատայի քաղաքներէն մէկուն մէջ արթնութեան ժողովներու կ'առաջնորդէի՝ մեր զործակիցներէն մին յաջողեցաւ ծեր մարդ մը բերել ժողովի. մարդ մը որ ամենուն ծանօթ էր իր հոգեւոր կատարեալ անտարբերութեամբը: Ես գայն չէի ճանչնար՝ բայց ժողովին սկիզբէն նկատեցի որ լուրջ ուշադրութեամբ մտիկ կ'ընէր. շատ չանցած անոր դէմքը արցունքներով ողողուեցաւ: Երբ արթնցած և մեղքի համոզման տակ տանջուող հոգիները հրաւիրեցի մեղաւորի Բարեկամին, որպէսզի Յիսուսի ապաւինին և այսպէս Անոր խոստացած փրկութիւնը ստանան, այս ծերունին առաջինը եղաւ ոտքի ելլող առանց դանդաղելու: Յետոյ առանց ուրիշներուն նայելու առաջ եկաւ և ծնրադրեց: Քիչ մը յետոյ կրկին ոտքի ելաւ և թուլտուութիւն խնդրեց քանի մը խօսք խօսելու: Ինծի թէեւ տարօրինակ թուեցաւ իր խնդրանքը, բայց և այնպէս իր դիրքին մէջ բան մը կար սր զիս արգիլեց զայն մերժել: «Բարեկամներս, ըսաւ ան, 25 տարիէ ի վեր սեւէ եկեղեցի կամ ժողովատեղի ոտք չեմ կոխած: Բոլոր այս տարիներու ընթացքին չեմ յիշեր թէ երբեք մէկ կաթիլ արցունք թափած ըլլամ: Բայց քիչ առաջ երբ Աստուծոյ սէրը մեզի նկարագրուեցաւ այնքան կենդանի և իրական կերպով, ես չկրցայ արցունքներս զսպել, որովհետեւ հրաշալի յայտնութիւն մըն էր զոր ունեցայ: Ո՛չ, մինչեւ հիմա չէի գիտցած թէ Աստուծոյ գիտ այս աստիճան սիրած է: Երբ որ հոս ծունկի եկայ, ըսի, «Ո՛հ, Տէր, ես սեծ մեղաւոր մըն եմ, բայց անձկանօք բոլոր սրտով կը փափաքեմ փրկուիլ»: Ծիշողնոյն վայրկեանին Յիսուս իմ աչքերուս առջեւ ներկայացաւ և դէմ առ դէմ տեսայ զԱյն. անմիջապէս իմ մեղքերուս ծանր բեռը անյայտ եղաւ: Թէեւ ես 80 տարեկան եմ, բայց Աստուծոյ գիտ փրկեց: Ո՛չ, այսպիսի հրաշալի սիրոյ մը վրայ երբեք չէի լսած»:

Իրաւցնէ ի՞նչ հրաշալի պատկեր է այս, Աստուծոյ հրաշալի շնորհքը ցուցնող: Միայն մարմինէն ծնած սրտին համար շնորհք բառին իմաստը հասկնալ շատ դժուար է: Երբ ինքզինքնիս փրկութեան հետ դէմ դիմաց կը գտնենք՝ ամէնաւ ալ կը փորձուինք «բան մը ընելով» սկզբիլ: Մեր սրտին այս առաջին շարժումը յստակօրէն կը ցուցնէ թէ Աստուծոյ առջեւ յանցաւոր

և անարժան ըլլալնիս կ'ընդունինք. առոր վրայ շատ բնականօրէն կը փափաքինք կարկտան ձգել: Այս ծերունին անմիջապէս հասկցաւ իր մեղքին անաւորութիւնը: Այս անաւորութիւնը ամբարշտութեան տարիներու թւոյն համեմատ կը բազմապատկուի: Երբ նա լսեց թէ ամբողջ կեանքի ընթացքին իր արհամարհած Աստուծոյ գիտքը գերազոյն և անհասկնալի սիրով մը սիրած էր՝ այն ատեն իր յիմարութեան անաւոր չափը յանկարծակի երեւցաւ իրեն: Այս պայմաններուն տակ խաչեալ Քրիստոսի վրայ նայուածք մը իրեն յայտնեց անմիջական փրկութեան մը կարելիութիւնը: Ինքն ալ անմիջապէս հաւատաց և հասկցաւ թէ աննպատակ էր փրկութիւն ստանալու համար պաղատել, քանի որ Փրկիչը իր քով կը գտնուէր: Անիկա իրեն համար և իր տեղ մեռնելով մեղքին անլուծելի հարցը լուծած էր, և ինք, մեղաւորը ազատուած էր: Ահաւասիկ շնորհքը:

Բայց վերջին ծայր հազուադէպ է հանդիպիլ 80 տարեկան մարդու մը փրկութիւն ընդունիլը իբր պարզեւ մը և հաւատքի պարզ քայլով մը: Որովհետեւ մտածելու, դանդաղելու սովորութիւնը կամքին վրայ ազդելով զայն միշտ կը ձախողեցնէ, այսպէսով 80ամեան շատ շատ աւելի դանդաղ է ապաշխարելու: Հետեւեալ վիճակագրութիւնը որ Վեր. Մօթթի կողմէ հաստատուած է՝ մեզի համար թէ՛ դաս մը և թէ լուրջ ազդարարութիւն մըն է:

1000 ապաշխարող և փրկութիւն գտնողներէ,
548 հատը 20 տարեկան չեղած կը փրկուին,
337 հատը 20-30 տարեքի միջև կը փրկուին,
96 հատը 30-40 տարեքի միջև,
15 հատը 40-50 տարեքի միջև,
3 հատը 50-60 տարեքի միջև,

և միայն

1 հատը 60-80 տարեքի միջև կը փրկուի:

Սիրելի ընթերցող հաւատացեալներ, անապաշխար հոգիի մը հանդիպած ատեննիդ անոր Յիսուսի մասին բառ մը ըսել ձեզի կրնայ պղծտիկ բան երեւնալ, բայց մեր Փրկչին համար պատշաճ տեղը ըսուած մէկ բառ ամենէն մեծ կարեւորութիւնն ունի:

Սիրելի հոգի, արդեօք ո՞ր տարեքին մէջ կը գտնուիս, փրկուելու համար որքա՞ն կարելիութիւն կայ դեռ քեզի. յարմար չէ՞ որ հիմա քու որոշումդ տաս: Յետ այսու Յիսուսի համար թող ըլլայ կեանք» ըսէ, և այդ խոստմանը ետեւ կեցիր, ու Աստուծոյ խաղաղութիւնը քու սիրտդ ալ պիտի լեցնէ:

ԵՐԻՏԱՍԱՐԴ... ՀՈԳԵՎԱՐԲ... ՅՈՒՍԱՀԱՏ...

Առողջ եւ կայտառ երիտասարդ մը օր մը կառքէ մը վար ինկաւ եւ ծանր վիրաւորուած վերցունեցաւ: Չայն մօտակայ տուն մը մտցունցին եւ աճապարանօք բժիշկ մը կանչեցին: Բժիշկը ներս մտածին պէս հիւանդը հարցուց,

«Բժիշկ, ես պիտի մեռնի՞մ, պէ՞տք է որ մեռնիմ. ո՛հ, քեզ կ'երգմնցնեմ, ճշմարտութիւնը ինձմէ մի պահեր եւ մի ջանար զիս խտրել»:

Երիտասարդին աղաչող ձայնն ու թափանցող ակնարկը բժիշկին խորապէս ազդեց, որ ստիպուեցաւ ճշմարտութիւնը ըսել:

— «Միայն մէկ ժամուան կեանք ունիս»:

«Ի՞նչ, պոռաց նա, մէկ ժամէն յաւիտենականութիւնը մտնե՞լ ստիպուած պիտի ըլլամ. մէկ ժամ յետոյ մեծ Դատաւորին առջեւ պէտք է երեւնամ: Աւա՛ղ որ այս բանին երբեք չեմ պատրաստուած: Ես գիտէի թէ անապաշխար երիտասարդներ յաճախ յանկարծ կը կտրուին բայց երբեք չէի խորհած թէ այս բանը ինձի կրնայ պատահիլ: Եւ հիմա ըսէք ինձի, ի՞նչ կրնամ ընել փրկուելու համար»:

Իրեն պատասխանուեցաւ թէ պարտի ապաշխարել եւ Տէր Յիսուսի հաւատալ:

— «Բայց ինչպէ՛ս կրնամ ապաշխարել եւ հաւատալ, շարունակեց նա, ասոր ժամանակ չկայ, քանզի մահը ինձ կ'սպասէ: Այս բանը ես շատ առաջ ընելու էի: Աստուած զիս երկրի վրայ դրած էր որ իմ յաւիտենական փրկութիւնս փնտռեմ. ես միշտ անհոգ գտնուեցայ խորհելով թէ շատ վերջը ժամանակ կը գտնեմ անով զբաղելու, բայց ահաւասիկ որ ապրելու մէկ ժամ միայն ունիմ: Մէկ ժամուան մէջ ի՞նչ կրնամ ընել, մինչդեռ ամբողջ կեանքս հազիւ պիտի բուէր փնտռելու եւ գտնելու այս «պէտք եղած մէկ բանը»:

Այս ցաւալի տեսարանը դիտողները դառնապէս կ'ուլային, բայց խեղճ մահամերձը աւելի եւ աւելի յուսահատ եւ խռովեալ կը կրկնէր,

«Ի՞նչ կրնամ ընել փրկուելու համար»: Պարապ տեղը զայն յորդորեցին ապաշխարել եւ Փրկչին հաւատալ: Այլեւս կարծես իրեն ըսուածները չէր լսեր, եւ երբ մահը վրան հասաւ՝ տակաւին կը կրկնէր.—

«Ի՞նչ կրնամ ընել փրկուելու համար»:

— «Քու Աստուածդ դիմաւորելու պատրաստուէ՛» Ամովս Դ. 12:

ՆԱՀԱՏԱԿՆԵՐ

Հիւանդներու հալածանաց ժամանակ ուսուցիչ մը բանտարկուեցաւ Սուրբ Գրքը կարդալուն համար:

— «Բու կինդ եւ զաւակներդ չե՞ս սիրեր, չե՞ս ուզեր անոնց սիրոյն կրօնքդ ուրանալ», հարցուց հաւատաւորնիչ պաշտօնեայ մը:

— «Աստուած գիտէ որ, պատասխանեց բանտարկեալը, եթէ երկիրքը սակիէ գունդ մը ըլլար եւ աստղերը մէյմէկ թանկագին ադամանդներ, եւ անոնց ամէնը իմս ըլլալին՝ զանոնք սիրայօժար պիտի տալի կինս եւ զաւակներս քովս ունենալու համար, նոյնիսկ եթէ պարտիմ կեանքիս փնայած օրերը այս շղթաները կրել եւ ցամաք հացով ու ջուրով կերակրուիլ: Բայց այսու ո՛չ կնոջս սիրոյն, ո՛չ զաւակներուս սիրոյն, ո՛չ կեանքիս սիրոյն եւ ոչ ալ բովանդակ աշխարհը շահելու համար իմ Փրկիչս Յիսուսը չեմ ուրանար»:

Հաւատաւորնիչ պաշտօնեային սիրտը բնաւ չկակղացաւ այս սրտածմլիկ խօսքերէն, եւ Քրիստոսի վկան չարչարուեցաւ այն աստիճան մինչեւ որ մահը եկաւ եւ զայն ազատելով իր Փրկչին քով տարաւ:

X

ԺՁ. դարու կիսուն թայնտէյլի թարգմանած Նոր Կտակարանը Անգլիոյ ամէն կողմերը լուսադանելով օրհնեալ պտուղներ երեւան կը բերէր: Հէնրի Ը.ի իշխանութեան ներքեւ, Լօնտոնի դպրոցներէն ուսուցիչ մը օր մը քահանայի մը քարոզը լսեց որուն մէջ նա կ'ըսէր.— «Ես կրնամ իմ կամքովս հաղորդութեան նշխարը Յիսուս Քրիստոսի մարմինն ու արիւնը ընել տառացիօրէն եւ նիւթականապէս»: Ուսուցիչը անոր ըսաւ «Այդ բանը չե՞ս կրնար ընել»: Քահանան սաստիկ բարկացած եպիսկոպոսներուն զանգատեցաւ անոր վրայ, «ըոնք զայն դատապարտեցին: Յայնժամ ուսուցիչը իր գատը թագաւորին յանձնեց: Թագաւորը զայն կանչեց եւ եպիսկոպոսներով, ազնուականներով ու դատաւորներով շրջապատուած հարցուց անոր, «Իրաւեց՞ չե՞ս հաւատար թէ քահանան կրնայ նշխարը Աստուած ընել»: Լամպէր (ուսուցիչը) յարգանք պատասխանեց, «Չեմ հաւատար թէ կրնայ»: Շատ մը եպիսկոպոսներ 5 ժամ ջանացին զայն համոզել: Խեղճ մարդը չարչարուած եւ յոգնած ալ ոչինչ կը պատասխանէր: Ի վերջոյ թագաւորը անոր հար-

ցուց, «Ապրիլ կը փափաքիս թէ մեռնիլ»:

«Ինքզինքս թագաւորին զթութեանը կը թողում», պատասխանեց Լամպէր:

Թագաւորը յայտնելով թէ ինք հերետիկոսներու պաշտպան ըլլալ չէր ուզեր, «Եթէ չես ուզեր հաւատալ թէ, յարեց, քահանան կարողութիւն ունի նշխարը բուն իսկ Փրկչին անձին վերածել, կրակով պիտի այրուիս»: Լամպէր տեղի չտուաւ: Դահլիճները թագաւորին հաճելի ըլլալու համար զայն կրակին ծայրովը այրել սկսան նախ ոտքերէն յետոյ սրունքները: Երբ սրունքները սպառեցան՝ իւեղծին չարչարանքը այնքան ահռելի թուեցաւ զինուորներէն ոմանց որ զայն իրենց նիզակներուն վրայ վերցնելով բոցերուն մէջ տեղը նետեցին: Լամպէր ամենէն ահռելի չարչարանքներուն մէջ մինչեւ իր վերջին շունչը առանց դադարի Տէր Յիսուսի անունը կը դաւանէր գոչելով «Միայն Քրիստոս, ուրիշ ոչինչ բայց միայն Քրիստոս»:

X

Պէրնար Բալիսի, Սէնթի նշանաւոր բրուտը որքան իբր արուեստագէտ եւ զիտուն նոյնքան ալ իբր քրիստոնեայ հռչակաւոր եղաւ: 1588ին կալվինական էր եւ մերժելով իր հաւատքը ուրանալ՝ Պասթիյի մութ գնդաններուն մէջ բանտարկուեցաւ: Օր մը Հանրի Գ. քովը գնաց ու ըսաւ, «Եթէ կրօնքդ չփոխես ստիպուած պիտի ըլլամ մօտ ատենէն քեզ թշնամիներուդ կատաղութեանը յանձնել»:

«Տէր, պատասխանեց բանտարկեալը, դուք ինձի յաճախ ըսած էք թէ իմ վրաս կը խղճաք, բայց հիմա կարգը իմ է որ Ձեր վրայ խղճամ երբ կ'ըսէք «Ստիպուած պիտի ըլլամ», Այսու ամենայնիւ զիտեցէք թէ ո՛չ դուք, ո՛չ իմ թըշնամիներս եւ ոչ ալ բոլոր Զեզ ստիպողները չեն կրնար զիս ստիպել որպէսզի պատկերներու առջեւ ծնրադրեմ ու զանոնք պաշտեմ»:

Այս յանդուպն պատասխանը թագաւորը զարմացուց ու նա փախաւ այս բարեպաշտ եւ հաւատարիմ հիւկնոյի ամբաստանող աչքերուն առջեւէն:

Պէրնար Բալիսի իր բանտին մէջ մեռաւ 1590ին 80 տարեկան հասակին մէջ: Բողոքական եկեղեցին կրնայ զայն իր նահատակաց շարքին մէջ հաշուել, որովհետեւ անիկա չվախցաւ նախատինքներէ ու հալածանքներէ, եւ նախընտրեց Քրիստոսի նախատինքը կրել քան թէ իր Տէրը ու իր Աստուածը ուրանալ:

Ս. ԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ԱՏՈՒԱԾԱՇՈՒՆԶԸ

ԳԻՐԲ ԵՐԿՐՈՐԴ ՕՐԻՆԱՅ

(Մաս Բ.)

«Եւ անկէ ետեւ Տէրոջը երես առ երես ճանչցած Մովսէսի պէս՝ Իսրայէլի մէջ մարգարէ մը չեղաւ: Այն բոլոր նշաններով ու հրաշքներով, զորոնք Տէրը զրկեց զանիկա Եգիպտոսի երկրին մէջ ընելու Փարաւոնի ու անոր ամէն ծառաներուն եւ անոր բոլոր երկրին, ու այն բոլոր զօրաւոր ձեռքով եւ բոլոր մեծ սոսկումով՝ զոր Մովսէս ըրաւ բոլոր Իսրայէլի աչքին առջեւ»:

Ահա այն վկայութիւնը որ Բ. Օրինացի վերջին տողերը կը բերեն Մովսէսի մասին: Ու այս Գիրքը, այն անզուգական Աստուծոյ մարդուն վերջին խօսքերուն թանգարանն է: Խօսքեր, որոնք խորունկ եւ յարաճուն Աստուածագիտութեան մը արդիւնքն են: Մովսէս «երես առ երես», ճանչցաւ զԱստուած, ու Բ. Օրինացի պատգամը հիմնուած է իր սաւառնոյ հոգեւոր կեանքին վրայ: «Բ. Օրինաց, ի պատգամը Մովսէսի հոգեւոր յառաջդիմութեան եւ իր ասպարէզին հասած ըլլալուն վկայութիւնն է միանգամայն:

Ձորէն հանուած մանուկը չենք զիտեր թէ որքան կեցաւ իր ծնողաց քով, բայց շատ հաւանաբար, այնքան երկար առէն որ պէտք էր հասկնալու իր մօրը սիրտը: Եւ մայրը, որ հատուքով՝ չվախցաւ թագաւորին հրամանէն, անտարակոյս մանուկ սրտին վրայ դրօշմեց իր կենդանի հաւատքին կնիքը ու զինեց մանուկ միտքը նահապետաց եւ Ուխտին Աստուծոյ վերաբերեալ խնդրոց վրայ պատմելով: Նախախնամական էր անոր Փարաւոնի պալատին մէջ անցուցած շրջանն ալ: Եւ մինչ նա կը կրթուէր եգիպտական բոլոր իմաստութեամբն ու զիտութիւնովը, նաեւ կը քալէր — եւ իր միտքը կը պատրաստուէր — լաւ եւս ճանչնալու զԱստուած: Եգիպտոսի քաղաքակրթութիւնն ու մանաւանդ կրօնքը, աստուածային ըլլալէ հետի էին, և Մովսէս զայս ճանչնալով կարծես կ'ուսանէր հակապատկերներու դասագրքէ մը: Եգիպտացւոց նիւթապաշտ, մարդկային և յաճախ զարշէլի սկզբունքները պիտի օգնէին Մովսէսի լաւ եւս զնահատելու, իւրացնելու եւ իրագործելու հոգեւորը, աստուածայինը եւ սուրբը որոնց հետ այնքան յարաբերութիւն պիտի ունենար իր բոլոր կեանքին մէջ:

Եզրիպտական կրօնական արարողություններէն կարգ մը ազդեցութիւններ ի յայտ կուգան Մովսիսական ծէսերուն մէջ: Օրինակ, Եզրիպտացիք ալ կը զործածէին տապանակներ, որոնց մէջ կը դրուէր սակայն քար մը կամ նեղոսի ջուրէն կամ օ՛ձ մը կամ ուրիշ հասարակ կամ զգուշի բան մը: Անօգուտ է մեզի այս մասին աչք զոցել կամ զարմանալ, բայց արդեօք այս իրողութիւնը ունէ կերպով կրնա՞յ պակսեցնել Մովսիսի հաստատած պաշտաման տեսակն ու եղանակին աստուածային ծագումը: Ամենեւին:

Աստուած Մովսիսի սորվեցուց որ այս բաները կրնային կազմել կարելիութիւն մը, որուն կեդրոնը եւ սկզբունքները սակայն հիմնովին փոխուելու կը կարօտէին: Այս պատճառաւ ալ Մովսիսի շինել տուած տապանակը կը պարունակէր սուրբ բաներ, ու Աստուծոյ ներկայութիւնը անոր վերեւն էր, եւ կարելի չէր առանց գոհի մօտենալ: Յիշենք թէ ինչպէս Տէրը կրկին եւ կրկին կը պատուիրէր «լերան վրայի ցոյց տըրած օրինակին պէս շինել», որով կը հետեւի թէ Տէրն էր որ ձեռք կ'առնէր կազմակերպութեան ղեկն ու հեղինակութիւնը, Մովսիսի ցոյց տալով այն որ կրնար բաւարար ըլլալ Աստուծոյ: Մինչ Մովսիս կը հնազանդէր ու կը զիտէր ներշնչեալ արուեստագէտներն ու ձեռագործները, որոնք կը թարգմանէին լերան օրինակը, կրնար լաւ եւս հասկնալ Աստուծոյ եւ մարդոց մտքին եւ սկզբունքներուն տարբերութիւնը: Սկզբունքներ, որոնք իրենց սրբութեան եւ բացարձակ բարոյական արժէքին ուժովը արդէն կ'աւետէին թէ կ'ընէր ու պիտի գար «Հոգիով եւ ճշմարտութեամբ եղած պաշտամունք մը»:

Եզրիպտոսէ հեռի՛, առանձնութեան մէջ Մովսիսի անցուցած տարիները, շարունակեցին խորունկցնել անոր ներքին կեանքը: Հանգարտ եւ ներհուն բնութեան ծոցին մէջ, կը տեսնէր ու իր հոգին կ'զգար Աստուծոյ փառքին ու անճառելի վեհափառութեան զօրութիւնը, մինչեւ որ հրավառ մորենին զինքը դէմ առ դէմ բերաւ ՆԵՐԿԱՅՈՒԹԵԱՆ մը եւ ձայնին որ կ'ըսէր, «Ես եմ ՈՐԷՆ»: Քիչ յետոյ հասկցաւ որ այս ՈՐԷՆը նաեւ Եհովան էր որ կը խոստանար ամէն ինչ ըլլալ իր ժողովուրդին համար: Յետոյ իր աղաչանքին փոխարէն Տէրը իր բարու իմը ցոյց տուաւ անոր: Ապա եկան Իսրայէլի հետ քառասուն տարուայ թափառումները եւ Մովսիս գիտցաւ որ Աստուծոյ աթոռին սկզբունքներն են Արդարութիւն Դատաստան, եւ տեսաւ նաեւ Անոր համբերութիւնը, քաղցրութիւնը, վերջապէս ճանչցաւ Աս-

տուծոյ սիրտը, ու այս բոլոր փորձառութիւններէն վերջն է որ սիրոյ եւ զուրգուրանքի, բայց միանգամայն ազդարարութեան ցնցիչ եւ հզօր շեշտերով է որ կը բերէ իր վերջին խօսքերը, իր վերջին պատգամը՝ իր միջոցաւ ազատագործած Իսրայէլին:

X

Պատգամը երեք ժամանակներն ալ կը գրաւէ եւ այն երեք մասերը որոնց բաժնուած է կարելի է հետեւեալ կերպով դասաւորել,

- 1) Անցեալին համար — յետահայեաց — պատմական,
- 2) Ներկային համար — ներքնահայեաց — բարոյական,
- 3) Ապագային համար — շրջահայեաց — ազատագրական:

Այս պատգամին մէջ տիրող գաղափարը սիրոյ գաղափարն է: Երեւակայական բան մը չէ այս: Աստուծոյ եւ մարդոց միջեւ յարաբերութիւն ցոյց տուող սէր բառը միայն մէկ անգամ կը պատահի Ելիցին մէջ, երբ Աստուած կը յայտարարէ թէ Ինք ողորմութիւն կը ցուցնէ հազարաւորներու «որոնք կը սիրեն զԻս եւ Իս պատուիրանքներս կը կատարեն»: Իսկ մարդոց միջեւ փոխադարձ յարաբերութեան մասին ըսած է, «Բու ընկերդ սիրես քու անձիդ պէս», «Սէր բառը միայնակ օտարական մըն է առաջին չորս գիրքերուն մէջ, կ'ըսէ Տր. Մօրկըն, բայց ամէն բան կը փոխուի Բ. Օրինաց Գրքին մէջ, որուն բարձրագոյն եւ գերակշիռ պատգամը սիրոյ պատգամն է»: «Եւ քու հայրերդ սիրելուն համար անոնցմէ ետքը անոնց սերունդը ընտրեց, ու իր ներկայութեամբ մեծ զօրութիւնով քեզ Եզրիպտոսէ հանեց», (Դ. 37): Այս խօսքերը կ'երեւին, յետագործ ակնարկին պատմականը ընող ճառին վախճանը: Մովսիս այս կերպով ցոյց կուտայ որ եթէ Աստուած կը կառավարէ ազգը, իր սիրոյն պատճառաւ է:

Երբ կ'սկսի երկրորդ անգամ կրկնել օրէնքը, ոչինչ կը գեղջէ անոր կարեւորութիւնն եւ պահանջքէն, սակայն կը մեկնէ անոր խոստութեան պատճառը, զայն սիրոյ, աստուածային սիրոյ վերագրելով: «...Բու Տէր Աստուծոյ վախճան, Անոր ամէն ճառքաներուն մէջ քալես, զԱնիկա սիրես, ու նաեւ քու բոլոր սրտովդ ու բոլոր հոգւովդ քու Տէր Աստուծոյ պաշտես եւ Տէրոջը պատուիրանքները պահես... որպէսզի քեզի աղէկ ըլլայ...»: Ժ. 12-15ը ցոյց կուտայ նոր եւ աննախընթաց կերպով մը որ եթէ Տէրը կը պնդէ

Իր օրէնքին պահուելուն վրայ, մարդը սիրելուն եւ անոր բարիքին համար է:

Մովսէսի վերջին երգին մէջ նոյն հոգին է: Հոն կ'երեւի մարդոց անհաւատարմութիւնը բայց Աստուծոյ հաւատարմութիւնը: Ալեոր օրէնագիրը լաւ կը ճանչնար Իսրայէլը եւ գիտէր որ իր մեղքին ու ապստամբութեան պատճառաւ տառապանքի պիտի մատնուէր, սակայն տակաւին կը զրէ եւ կը սորվեցնէ երգը: Մովսէս կարծես կ'ուզէր Իսրայէլի մտքին մէջ որոշ գրել Աստուծոյ սէրը, եւ ըմբռնելով ժողովրդական երգին մնացուն ազդեցութիւնը, Իսրայէլի ապստամբութիւնն ու Եհովայի սէրը քով քովի կը դնէ իր վերջին երգին մէջ: Իր բաժանումէն յետոյ Աստուծոյ սիրոյն կոթողը ու փարոսը պիտի ըլլար այդ երգը մոռացութեան եւ խաւարի օրերուն: Օրհնութիւնը որ կը յաջորդէ երգին, դարձեալ կը բերէ սիրոյ զազափարը, եւ այսպէս կը տեսնենք որ անցեալին պատմականին մէջ, ներկային բարոյականին պահանջքովը, կամ ապագային իր ըրած ազդարարութիւններով Մովսէս կը յայտարարէ, որ Աստուծոյ մարդոց վրայ ի գործ դրած կառավարութիւնը Իր սիրոյն վրայ հիմնուած եւ անկէ ծագած է:

X

Դարձեալ նկատելի է որ միայն Աստուծոյ վրայ ունեցած սէրն է որ կրնայ մարդը կարողացնել պահելու Անոր օրէնքը: «Ով Իսրայէլ, մտիկ ըրէ, մեր Տէր Աստուածը մէկ Տէր է: Ու քու Տէր Աստուածդ բոլոր սրտովդ, բոլոր հոգովդ ու բոլոր զօրութիւնովդ սիրես, եւ այս խօսքերը զորոնք ես այսօր քեզի պատուիրեցի, քու սրտիդ մէջ ըլլան» 2. 4-6:

Միայն մէկ Աստուծոյ վրայ եղած սէրն է որ բաւարար դրդապատճառ մը կրնայ կազմել պահելու Աստուծոյ օրէնքը: Երբ կը խորհինք որ մարդ սահմանաւոր է բայց անսահման իրողութիւններով եւ յաւիտենականութեամբ պաշարուած ըլլալով կը կարօտի ճանչնալու անոնց օրէնքները, երբ կը խորհինք որ Աստուած մարդս կոյր վիճակի մը չենթարկելու եւ իր բախտին չթողելու համար կը սիրէ զայն եւ Իր օրէնքը կուտայ եւ այս կերպով ճամբայ մը կը բանայ մարդուն ի վերջոյ զայն Իրեն բերելու օրէնքին դաստիարակիչ պաշտօնովը, յայնժամ Աստուծոյ սէրը կը ծագի մարդուն սրտին մէջ եւ այս սէրը միակ պատճառը կը կազմէ պահելու Իր օրէնքը: Ուրեմն Աստուծոյ հանդէպ եղած սէրը

կարելի է արտայայտել Անոր տուած օրէնքը իւրացնելով: Մարդուն անկարողութիւնը տարբեր հարց մ'է, որուն վրայ չենք խօսիր ճիշդ հիմա: Աստուծոյ օրէնքին լման հնազանդելու համար, բացարձակ վստահութիւն պէտք է Անոր կամքին, ինչ որ սակայն կարելի չէ եթէ նախ վրստահութիւն չըլլայ Անոր սիրոյն:

X

Ճանչնալ եւ սիրել զԱստուած, հնազանդիլ Անոր: Ահա երբեակ պատգամ մը:

Կը ճանչնա՞ս զԱյն: Ինչո՞ւ ոչ: Թերեւս անոր համար է որ կը փակես սիրտդ Իր շնորհքին եւ ներկայութեան առջեւ: Աստուծոյ փառաց գիտութեան լոյսը Քրիստոսի երեսին վրայ է, բայց նա բնաւ չպարտադրեր Ինքզինքը, սակայն եկած է քեզի, մէկ, երկու, տասը անգամ եւ քեզի ալ կ'ըսէ Իր անդիմադրելի ձայնովը, «Տակաւին չը ճանչցա՞ր զԻս»: Պատճառը այն է որ այս սէրը կարելի է մերժել: Մարդուն սրտին էն ճիւղային եւ անհասկնալի միեւնոյն ժամանակ ամենէն ողբալի մեղքերէն մին այս է — մերժել Աստուծոյ սէրը: Ո՞վ կրնայ չափել մարդկային սրտին կարծրութիւնը որ կը մերժէ բացուիլ եւ հալիլ Աստուծոյ սիրոյն տակ: Այս է իր վերջին վիճակին մէջ, Սուրբ Հոգիին դէմ զործուած անհերելի մեղքն ու հայհոյութիւնը: Սիրելի անապաշխար ընթերցողս, Հնգամատեանին վերջին պատգամը այս է քեզի, ճանչցի՛ր զԱյն, տեղ բաց քու Փրկչիդ քու սրտիդ մէջ:

Եկեղեցիին համար պատգամն է «հաւատքը սիրով ի գործ դնել», կամ «ստիպող սիրոյն» զոհարերող կեանքը: Անոնք որ կը ճանչնան զԱյն, չեն կրնար ուրիշ բան ընել, եթէ ոչ յօժարիլ «Քրիստոսի մահը իրենց մարմիններուն մէջ կըրելու»: Միայն առ Աստուած եղող «մահու չափ զօրաւոր սէրը» կրնայ երեւան բերել այս յօժարութիւնը: Սէրը ուրեմն զօրութիւնն է որ կը բռնէ մեզ ու կը տանի խաչին կապելու, անոր զամելու մեզ, ստիպելով զմեզ որ մեր կեանքին փառքն ու շահերը դնենք, նետենք մահուան գիրկն ու մոխրի փոշիներուն մէջ, որպէսզի մեռնող ցորենի հատիկէն ծնին անմահութեան պտուղներ: Այս կեանքը իրական է մեր մէջ: Այս է Աստուծոյ ակնկալածը Իր եկեղեցիէն «որ սիրեց եւ Իր արիւնովը ստացաւ»:

Սիրոյ արտայայտութիւններն ու եկեղեցւոյ մէջ լսուած ուխտերն ու նուիրման ազօթքները խիստ ուրախալի են: Աւելի կարեւոր է սակայն

զգացումները արտայայտել է յետոյ զանոնք թարգմանել ամենօրեայ հաւատարիմ եւ տեւական հնազանդութեամբ:

Աստուծոյ ամենօրհնեալ կամքին մէջ ծրարուած են ներկայիս եւ յաւիտեանականութեան համար անզուգական եւ անգնահատելի արժէքներ: Որդեգրութեան փառքին կանչուողները կոչուած են թափանցելու Անոր սրտին մէջ, որ եկեղեցիին Գլուխն է, նաեւ կոչում ունին գործադրելու Անոր կամքը: «Արդ հնազանդեցէք Աստուծոյ: Անոր Աստուծոյ կամքը կը կատարէ յաւիտեան կը մնայ»: Եկեղեցիին Աստուածազիտութենէն ծնած սէրը թարգմանուելու է հնազանդելով Աստուծոյ: Անոր հնազանդող հոգիներն են որ մեղսագրաւ եւ խաւարած աշխարհին բերած են սրբութեան եւ լոյսի անդիմազրելի ալիքներ: Նոր շնորհք, նոր օրհնութիւն եւ անպատում պարզեւներ կան այս օրերուն համար ալ, ու Աստուած կ'ակնկալէ զանոնք իրականացնել հնազանդ կեանքերու եւ նուիրուած հոգիներու միջոցաւ: Նայեցէք այս կոչումին, չձախողեցնէք «մեր կոչումն ու ընտրութիւնը, այնպէս վազեցէք որ հասնիք»:

Մինչ կը վերջացնեմ չնգամատեանին այս կարճառօտ վերլուծումները, սիրտս կը բարձրացնեմ Աստուծոյ որ Իր Հոգիովը հովանի ըլլայ Բանբերի ընտանիքին վրայ, ու հաճի մեր մէջ ներգործել կամենալը եւ ընելը Իր փառքին ու հաճութեանը համար: Յիսուս Քրիստոս նոյնն է երէկ, այսօր ու յաւիտեանս ու մեր պատգամը Հին կամ նոր կտակարանին մէջ նոյն ուժն ու արժէքը ունին:

Բայց խօսքը կատարողներ ըլլանք եւ ոչ միայն լսողներ:

Փարիզ

Զ. Բ. ՊՈՒՏԱՔԵԱՆ

ՎԵՐՋ ՀՆԴԱՄԱՏԵԱՆԻՆ

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

ԱՏՕԼՅ ՄՕՆՕ

Եթէ Տէրը կամենայ յառաջիկայ թիւէն սկսեալ պիտի հրատարակենք Ֆրանսացի նշանաւոր աւետարանիչ Ատօլֆ Մօնօյի կենսագրութիւնը: Մեզմէ երկու դար առաջ ապրող Տէրը ընտանիքս «որ տակաւին կը խօսի, թէպէտ մեռաւ», իր կեանքի պատգամով ամենուս օգտակար բաժիններ կրնայ տալ:

Մ'ԱՆԿԱՆՑ ՍԻՆԱԿ

ՀԱՍԿԱՔԱՂ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՊԱՏՈՒԻՐԱՆԲԸ

Պատիկ տղու մը հարցուցին թէ հինգերորդ պատուիրանքը, այսինքն պատուէ քու հայրդ ու մայրդ՝ խօսքը ինչպէ՞ս կը հասկնայ: Նա հետեւեալը պատմեց:

— Երէկ լեռան վրայէն քանի մը պարոններու առաջնորդութիւն կ'ընէի: Ես բոլորիկ էի եւ քարերը ոտքերս կը ճեղքատէին: Հետո երրորդ պարոնները արիւնջուայ ոտքերս տեսնելով ինծի դրամ տուին որպէսզի զոյգ մը լաւ կօշիկներ գտնեմ: Բայց ես դրամը մայրիկիս տարի որովհետեւ մայրիկս ալ կօշիկ չունէր, իսկ ինքս առանց կօշիկի աւելի դիւրաւ կրնայի հանդուրժել քան թէ ինքը:

Այս պատիկ տղան ոչ թէ միայն հասկցած էր «պատուէ քու հայրդ ու մայրդ», բառերուն իմաստը, հապա նաեւ կատարած էր գործնականին մէջ: Որքա՞ն շատ մանուկներ կան որոնք անհոգ կը գտնուին ու դիւրաւ կը մոռնան Սբ. Գիրքէն իրենց սորվածները հասկնալու ու կատարելու մէջ: Դուք անհոգ մի ըլլալ, հապա սորվէ ու կատարէ: Յիսուս ըստ, «Եթէ զուք այս բաները գիտէք, երանելի էք եթէ ասոնք կատարէք» (Յովհ. ԺԳ. 17):

ՊԶՏԻԿ ՈՐԲԸ ԵՒ ՍՈՒՐԲ ԳԻՐՔԻ ՀԱՄԱՐԸ

«Ո՛հ, որչա՛փ ուրախ եմ որ այսօր կիրակնօրեայ դպրոց գացի», կ'ըսէր որք տղայ մը, «վարժուհիս ինծի Սուրբ Գիրքին ամենէն զեղեցիկ համարը սորվեցուց»:

«Թէեւ հայրս ու մայրս զիս թողուն, բայց

Տէրը զիս պիտի ընդունի» (Սաղ. ԻԷ. 40):

Ի՞նչ զեղեցիկ համար մըն է այս, եւ ես զիտեմ թէ ճշմարիտ է:

Պատիկ որք տղան իրաւունք ունէր հաւատալու թէ Աստուած անտէր որք մանուկը երեսի վրայ չձգեր: Բայց միշտ Աստուծոյ պաշտպանութեան տակ ապահով ըլլալու համար՝ պէտք է որ մանուկ մը ինքզինքը բոլորովին Աստուծոյ յանձնէ:

«Բու ստեղծիչդ երիտասարդութեանդ օրերուն մէջ յիշէ» (Ժող. ԺԲ. 1):

«Մանկութենէս ի վեր իմ յոյսս դուն ես» (Սաղ. ՀԱ. 5):

«Ով Աստուած, մանկութենէս ի վեր սորվեցուցիր ինձի» (Սաղ. ՀԱ. 17):

«Եւ Սամուէլ մանուկը քթանէ եփուտ հագած՝ Տէրոջը առջեւ ծառայութիւն կ'ընէ» (Ա. Թագ. Բ. 18):

ՄԵՂԲԸ Կ'ԱՂՏՈՏԷ ՄԵՉ

Հինգ տարեկան պզտիկ աղջիկ մը գնաց քարոզ մը մտիկ ընել պատուելիէ մը, զոր շատ կը սիրէր: Տուն դառնալուն իր մայրիկին ըսաւ.—

«Մայրիկ, քեզի քիչ մը պատմե՞մ թէ պատուելին ի՞նչ ըսաւ իր քարոզին մէջ: Ան ըսաւ, «Պիղծ բանի մի դպչիք»:

Մայրը ուղեւորով գիտնալ թէ աղջնակը այս խօսքերուն ճշմարիտ իմաստը հասկցած էր արդեօք, անոր ըսաւ.—

«Բանի որ պատուելին այդպէս քարոզեց, կը խորհիմ թէ ասկէ յետոյ այլեւս ուշագրութիւն պիտի ընես որ երբեք ոեւէ աղտոտ բանի ձեռք չդարնես»:

Մանուկը ժպտեցաւ եւ ըսաւ, «Բայց մայրիկ, պատուելին ըսել ուզածը այդ չէր»:

«Հապա ի՞նչ էր»:

Պատուելին մեղքի համար ըսել կ'ուզէր անշուշտ, ճիշդ նոյնը պիտի ըլլար եթէ ըսէր, «Սուտ մի խօսիք, ձեր ծնողաց հնազանդ եղէք, կիրակին մի պղծէք, մի բարկանաք, ոեւէ չար բան մի ընէք»:

Այս պատասխանը կատարելապէս ուղիղ էր: Մեղքը, ինչ տեսակի ալ որ ըլլայ՝ աղտոտ եւ պիղծ է, եւ Աստուծոյ աչքին գարշելի: Անոնք որ չեն ուզեր մեղքը թողուլ, բնաւ երկինք պիտի չմտնեն, որովհետեւ «Հոն բնաւ անմաքրութիւն մը պիտի չմտնէ, ոչ ալ պղծութիւն ու սլտութիւն գործող մը, հապա միայն անոնք որ Դառնութիւն կենաց Դիրքին մէջ գրուած են» (Յայտ. ԻԱ. 27):

ՆԵՐՈՂՈՒԹԻՒՆ ԽՆԴՐԵԼ

Էմիլ անունով տղայ մը օր մը անհնազանդ եղաւ իր հայրիկին եւ մօտերկու ժամ բանտարկուեցաւ հօրը կողմէ: Դուրս ելլելուն պէս հայրիկին քով վազեց եւ ըսաւ, «Հայրիկ, չեմ կրնար գործիս սկսիլ առանց քեզմէ ներողութիւն խնդրելու. քեզի անհնազանդ ըլլալուս համար կը զղջամ. շատ կը ցաւիմ եւ կը խնդրեմ սիրելի հայրիկ որ ինձի ներես»:

«Սիրելի դաւակ», ըսաւ հայրը, ես ալ արգէն

քեզ պատժեցի որպէսզի սխալդ ճանչնաս, հիմա որ կը զղջաս անհնազանդ ըլլալուդ վրայ, եւ կը խոստովանիս, ես ալ սիրով կը ներեմ քեզի»:

Էմիլ շնորհակալ եղաւ եւ հայրիկը համբուրելէ յետոյ վազեց դասը սերտելու: Հայրը ետեւէն գնաց եւ ըսաւ, «Տղաս, չէ՞ որ դուն երկինքն ալ Հայր մը ունիս, եթէ քու յանցանքդ ինձի ցաւ պատճառած էր՝ անշուշտ Անոր ալ ցաւ տրուաւ, չե՞ս ուզեր նաեւ երկնաւոր Հօրմէջ ներողութիւն խնդրել»:

«Բայց հայրիկ, քու քովդ դալէ առաջ՝ բանտարկուած սենեակիս մէջ ես արդէն Աստուծմէ ներողութիւն խնդրեցի: Դիտէի թէ ամէն բանէ առաջ Իր շնորհքը խնդրելու էի: Կը հաւատամ թէ Ան ալ ներած է ինձի, որովհետեւ սիրտս թեթեւ եւ ուրախ է: Էմիլ այսպէս կ'ըսէր կատարեալ ուրախութեամբ՝ թէ եւ յուզուած եւ աչքերը արցունքով լեցուած: Ներողութիւն խնդրելը սիրտը կ'ուրախացնէ:

ՄԱՆՐ ՍԵՐՄԵՐ

Պզտիկ Եղիսաբէթ գեղեցիկ գիրք մը ստացաւ իրը նուէր: Դիրքը սիրուն պատկերներով զարդարուած էր եւ նա սկսաւ հիացումով դիտել զանոնք: Առաջին պատկերը կը ներկայացնէր պղծտիկ տղայ մը որ առուակի մը եզերքը նստած՝ ջուրին մէջ սերմեր կը նետէր: «Ի՞նչ կը նշանակէ այս նկարը», հարցուց պզտիկ աղջիկը, «ի՞նչ՞ այս տղան ջուրին մէջ սերմեր կը նետէ»:

— Ես գիտեմ, ըսաւ եղբայրը Երուանդ, այս տղան շուշանի սերմեր կը ցանէ:

— «Բայց որքա՞ն մանր սերմեր են ասոնք», գոչեց Եղիսաբէթ, «զարմանալի չէ՞ որ այնքան գեղեցիկ տունկեր ու ծաղիկներ այսքան մանր սերմերէ յառաջ կուգան»:

— Եղիսաբէթ, դուն ալ ամէն օր նոյնքան մանր սերմեր կը ցանես, ըսաւ հայրը, եւ պիտի տեսնես թէ քիչ ժամանակ յետոյ անոնցմէ մեծ ու զօրաւոր տունկեր պիտի բուսնին:

— «Ո՛հ, հայրիկ, շատոնց է որ ես բան մը չեմ ցանած»:

— Բայց ես այսօր տեսայ թէ որքան շատ սերմեր ցանեցիր, ըսաւ հայրիկը:

Եղիսաբէթ զարմացած հօրը կը նայէր: Հայրիկը ժպտեցաւ ու շարունակեց, «Այո, ես այսօր տեսայ թէ պզտիկ աղջիկս ծառերու, ծաղիկներու եւ նոյնիսկ գէշ ու անպէտ խոտերու սերմեր ցանեց»:

— «Հիմա հայրիկ, գիտեմ այլեւս թէ կատակ

կ'ընես, որովհետեւ վստահ եմ թէ ես երբեք գէշ ու անպէտ խոսեր ոչ կը ցանեմ, ոչ կը տնկեմ»:

— Պէտք է ուրեմն որ ըսածս բացատրեմ, պատասխանեց հայրիկը: Այս առտու, երբ հաճելի պատմութիւններու գիրքդ մէկդի դնելով գացիր եւ պատիկ եղբորդ ուզած խաղալիքը իրեն բերիր, սիրոյ եւ ծառայութեան սերմեր ցանեցիր: Երբ մայրիկիդ համար շատ կարեւոր եղած այն ամանը կտարեցիր եւ յետոյ վազեցիր անոր պատմեցիր ըրածդ, ճշմարտախօսութեան սերմեր ցանեցիր: Երբ փողոցին դռնէն ջուր ուզող այն խեղճ կնոջ գաւաթ մը ջուր տարիր, բարեգործութեան սերմեր ցանեցիր: Բոլոր ասոնք շատ գեղեցիկ տունկեր են որոնք անպատճառ պիտի մեծնան եթէ չմոռնաս զանոնք զգուշութեամբ մշակել (ջրել): Բայց կը յուսամ թէ իմ պատիկ աղջիկս Աստուծոյ սիրոյն մեծ ծառն ալ պիտի տնկէ եւ զայն ամէն խնամքով պիտի մշակէ, պիտի ջրէ եւ թոյլ տալ որ նա աճի, մեծնայ մինչեւ որ անոր ճիւղերը երկինք հասնին եւ Աստուծոյ գահուն առջեւը միանան:

— «Հապա գէշ եւ անպէտ խոսերը որոնք ցանեցի, անոնք ինչե՞ր են, հայրիկ»:

— Երբ պատիկ եղբորդ լացը լսելով անհամբեր եղար եւ Բօպէրին բարկացար՝ բարկութիւն ցանեցիր: Երբ մայրիկդ քեզ կանչած ատեն զալ չուզեցիր՝ անհնազանդութիւն ցանեցիր: Ասոնք ալ գէշ եւ անպէտ տունկեր են զաւակս: Թող մի տար որ ասոնք սրտիդ մէջ մեծնան, եթէ ոչ բոլոր միւս բարի տունկերը կը խեղդեն եւ կը մեռցնեն:

.....

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

Ստար թերթերէ կը տեղեկանանք

ԱՄԵՐԻԿԱ.— Հստ տեղական քրիստոնէայ պարբերաթերթի մը, Միացեալ Նահանգաց մէջ 1906էն մինչեւ 1926 Հոգովմէական կաթոլիկ եկեղեցւոյ անդամներուն թիւը 25 առ հարիւր յաւելում կրած է, իսկ բողոքական եկեղեցիներու անդամակցողները 46 առ հարիւր աւելցած են: Ասիկա հակառակը կ'ապացուցանէ այն ընդհանուր կարծիքին թէ Ամերիկայի մէջ կրօնական հաստատութեանց անդամները նուազած են վերջին 20 տարիներու ընթացքին: Այս տեղեկութիւնները քաղուած են նոյն խնդրին քննութեան համար նախագահ Հովարդի անուանած յանձնախումբին տուած տեղեկագրէն, որ նոր հրատա-

րակուած է Նիւ Եօրքի մէջ: Հստ տեղեկագրին, մինչեւ վերջերս եկեղեցիներու անդամները աւելցած են նոյն սակով, որով աճած է երկրին բնակչութիւնը: Միեւնոյն ատեն եկեղեցիներու նիւթական կարողութիւնը աւելի մեծ համեմատութեամբ աճած է: Այսպէսով կարելի եղած է երկրին թէ՛ ներսը թէ՛ դուրսը միասին. գործը աւելի յառաջ տանիլ: Հակառակ որ 1923էն ի վեր միասնաբարներու թիւը փոքրիկ նուազում մը կը բերած է, մինչեւ 1929ը ամբողջ աշխարհի մէջ զբաղւած ամերիկացի միասնաբարներու թիւը կը հաշուուէր 12500: 20 տարի առաջ անոնց թիւը 6900 էր:

Յանձնախումբը կը տեղեկագրէ նաեւ թէ Տէրունական օրը սուրբ պահելու մէջ ժողովուրդը որոշ կերպով թերացած է վերջերս: Ինքնաշարժը, բատիօն, սինեման, կօֆը, թէնիսը եկեղեցիներու հետ կը մրցին եւ ժողովուրդը կ'աօինքնեն:

Ներկայիս եկեղեցիներու եւ սինակոկներու թիւը 252000ի կը հասնի Միացեալ Նահանգաց մէջ, 24000 աւելի 1906ի թիւէն:

ՉԻՆԱՍՏԱՆ.— Չինաստանի ազգային քրիստոնէական խորհուրդին միացած եկեղեցիները 306 000 անդամ կը հաշուեն ըստ վերջին վիճակագրութեան: Ասոնց 406 000 ը կը պատկանին Քրիստոսի եկեղեցիին, 404 000 ը անգլիական եւ ամերիկեան Մէթոտականներ են, 32 281 ը անկլիքան, 28 000 ը մկրտական եւ 14 000 ը ժողովական: Պազէի միսիոնարութիւնը ունի 7 000 անդամ: Չինաստանի ազգային Խորհուրդէն անջատ կան նաեւ Չինաստանի ներքին միսիոնարութիւնը 74 000 անդամով եւ լուսերականներ 27 000 անդամով:

Ֆրանսահայ Աւետ. եկեղեցիներու Միութեան ժողովը տեղի պիտի ունենայ Օգոստ. 29-31ի օրերը: Կը խնդրուի եկեղեցիներէն յատկապէս աղօթել սոյն օրերուն համար, որպէսզի Տէրը փառաւոր ըլլայ մեր մէջ:

Rédaction du « PANPÈRE »

7, Rue Papère - MARSEILLE (France)

Le Gérant : Mr. le PASTEUR KALTENBACH

Imp. Y. ARMEN & Cie, 39 Rue St.-Savournin - Marseille

ՀԱՅ ԱԿԵՏ. ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐ ՖՐԱՆՍԱՅԻ ՄԷՂ

(Շարաձառիչի աղօթածողով ներու. մասին հարցնել տեղոյն վրայ):

ՄԱՐՍԷՅԷ—Հովիւ' Յ. Ն. Ղազարսեան
7 Rue Papère.

Կիր. ժամը 8. 15 ին կիրակնօրեայ դաս,
11, Rue de l'Eclipse.

13 ին քարոզածողով,
13 Rue Delille.

15 ին աղօթածողով,
11, Rue de l'Eclipse.

9. 30ին կիրակնօրեայ դպրոց
մանկանց 11 Rue de l'Eclipse

Շարաձառիչի ժողովներ Սէն Լուի, Կարտանի,
Սէն ժիւլիէնի, Սէն Սեմուանի, Սէն Մարկրի-
թի, Սէն ժերմի Պուլվար Օտօի մէջ):

Սէն Լուի.—Քարոզիչ Պրն. Վաֆան Սահակեան,
28, Bd. Grands Pins, St. Loup

Կիր. ժամը 8ին մանկանց կիր. դաս:
9. 30ին Ս. գրական ուսումնա,
16 ին քարոզածողով:

Սէն Մարկրիթ.—

Կիր. ժամը 16ին աղօթածողով:

ԼԱ ՍԻՌԹԱ.— Քարոզիչ Պրն. Ս. Պագգալեան,
14 Rue Fougasse

Կիր. ժամը 9. 30 ին աղօթածողով
Ֆրանս. եկեղեցիին մէջ
15 ին քարոզածողով,

Մանկանց կիրակնօրեայ դաս նոյն տեղը:

ԲՕՆՏ ՕՊԷՆԱՍ—Հովիւ' Պատ. Ա. Փափագեան
Pont-d'Aubenas, (Ardèche)

Կիր. ժամը 8. 30 մանկանց կիրակ. դաս
10. 15 քարոզածողով
18. 30 աղօթածողով

Սէն Փիէր.—

Կիր. ժամը 10ին մանկանց կիր. դպրոց:
16. 30 ին քարոզածողով եւ
աղօթածողով:

ՄՕՆՔԷԼԻՄԱՐ.—

Կիր. ժամը 13ին մանկանց կիր. դպրոց:
14ին քարոզ եւ աղօթածողով:

ՎԱԼԱՆՍ.—

Կիր. ժամը 13ին քարոզածողով Ֆրանս.
եկեղեցիին մէջ:

ՌՕՄԱՆ.—

Կիր. քարոզածողով:

ԼԻՐՕՆ— Հովիւ' Պատ. Ժ. Պարսումեան.

18 Rue du Dr. Rebatel.

Կիր. ժամը 9. 45ին քարոզածողով,
5 Cours Lafayette, 8 Passage Poste.

11ին աղօթածողով նոյն տեղը:

15 ին երիտասարդութիւններու

ժողով (15 օրը անգամ մը):

18 Rue du Dr. Rebatel.

ՏԷՍԻՆ.—

Կիր. ժամը 13. 45ին քարոզածողով,
15ին աղօթածողով: Rue Wilson.

ՍԷՆ ՄՕՐԻՍ

Կիր. ժամը 10ին քարոզ եւ աղօթածողով:

ՎԻԷՆ.—

Կիր. ժամը 15ին քարոզածողով
Rue Lafayette.

ՎՕՆ ՏԸ ՇԷՐԻԻ.—

Կիր. քարոզածողով եւ աղօթածողով
(15 օրը անգամ մը):

ՍԷՆՔԷԺԻԷ—Քարոզիչ Պրն. Ի. Արրահամեան
2, Place de la Pareille.

Կիր ժամը 10. 30ին քարոզածողով
57 Rue de la République.

17ին աղօթածողով

Արմէ տիւ. Սալիւի սրահին մէջ:

ՍԷՆ ՇԱՄՕՆ.—

Կիր. ժամը 14ին քարոզածողով
Mairieի մէջ, Justice de la Paix սրահը.

ԲԱՐԻՋ— Հովիւ' Պատ. Զ. Բ. Պուտաքեան,
13 Bd. du Lycée Vanves (Seine).

Կիր. ժամը 10 15ին քարոզածողով
135 Bd. de Sebastopol Paris 2^e
Metro Réaumur - St. Denis

Կիր. ժամը 15. 30ին
37 Rue Tournefort Paris 5^e
Metro Mouhe Aut. K6

Ամսոյն Ա. կիրակիները երիտասարդա-
Քրիստոնէական Միութիւն

բանախօսութիւնք եւ ուսումնասիրութիւնք:

Ամսոյն Գ. կիրակիները երիտասար-
դութեան Քրիստոնէական Միութիւն

բանախօսութիւնք եւ ուսումնասիրութիւնք:

Ամսոյն Բ. եւ Դ. կիրակիները Սր. Գրոց
մեկնութիւն եւ դասաւանդութիւն բոլորին համար

Կիր. ժամը 20. 30ին աղօթածողով
59 Ave. du Bas Meudon Ile St Germain
Issy les Moulineaux.

ԱԼՖՕՐՎԻԼ.— Հովիւ' Վեր. Մ. Տէր Սահակեան,
16 Bd. Carnot, Alfortville

Կիր. ժամը 15. 30ին պաշտամունք
Rue des Brochets, Alfortville.

1954Ի ՀԱՅ ԸՆՏԱՆԻՔԻ ՕՐԱՑՈՅՑԸ

Պատրաստութեան մէջ է Հայ Ընտանիքի օրացոյցը 1954 տարուան համար, եւ եթէ Տէրը կամի 13 օրէն պատրաստ կ'ըլլայ: Մեր ներկայացուցիչներն ու բաժանորդներէն շատեր կը ճանչնան զայն արդէն երկու տարիներէ ի վեր եւ գնահատած են: Այս տարուան պատկերները անցեալները կը գերազանցեն: Որպէսզի ժամանակէն առաջ ամէն տուն հասնի այն քիչ մը կանուխ լոյս հանել խորհեցանք, ուստի ունենալ փափաքողներ թող հաճին շուտով ապսպրել: Ապսպրանքներ հիմակուրնէ կ'ընդունուին: Գինը անցեալի նման՝ ձեռքէ 6 ֆր. փութով միասին 6.50 ֆր. արտասահման 7 ֆր է:

Ա.ԶԴ

Մեր բաժանորդներէն անոնք որ իրենց այս տարուան բաժնեգինը զրկած չեն, թող հաճին ֆրանքի հաշուով զրկել մեզ, քանի որ զրամի օրական փոփոխութեանց պատճառաւ Բանքեր վնաս կրելու ենթակայ է: